

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԻՆՋԱ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵՂԱԿԱՊՄԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ)

Պատվիրատու՝  
Հայաստանի տարածքային  
զարգացման հիմնադրամ (ՀՏՀՀ)

Նախաձեռնող՝  
«Շինվեկտոր» ՍՊԸ

Երևան 2024

# Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	5
2. Հավելվածներ.....	5
3. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	6
4. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը, .....	6
5. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը.....	7
5.1 Ենթակա տարածք. ....	7
5.2 Շրջակա միջավայրի բնութագրերը.....	13
5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը .....	13
5.2. 2. Սեյսմիկա և երկրաբանություն .....	14
5.2.3. Կլիմա և օդային ավազան.....	15
5.2.4. Հողային ռեսուրսներ .....	20
5.2.5.Ջրային ռեսուրսներ .....	22
5.2.6. Կենսաբազմազություն . ....	24
5.2.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ . ....	28
5.2.8. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	29
5.2.9. Բնության հուշարձաններ. ....	33
5.2.10. Սոցիալ-տնտեսական հարցեր . ....	35
6. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ), շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ), .....	38
7. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	55
<b>8. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման, փակման փուլ) .....</b>	<b>59</b>
8.1 Օդային ավազան . ....	59
8.2 Հողային ռեսուրսներ . ....	71
8.3 Ջրային ռեսուրսներ . ....	71
8.4 Կենսաբազմազանություն.....	72
8.5 Թափոններ . ....	72
8.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	74
8.7 Աղմուկ և թրթռում. ....	74
8.8 Արտակարգ իրավիճակներ . ....	76
8.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն . ....	77

8.10 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն .....	77
8.11 Սոցիալական հարցեր .....	79
8.12 Լանդշաֆտ .....	79
8.13 Բարեկարգում և Կանաչապատում .....	80
9. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան).....	82
9.1 Օդային ավազան.....	82
9.2 Հողային ռեսուրսներ .....	82
9.3 Ջրային ռեսուրսներ .....	83
9.4 Կենսաբազմազանություն.....	84
9.5 Թափոններ .....	84
9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	85
9.7 Աղմուկ և թրթռում .....	86
9.8 Արտակարգ իրավիճակներ .....	86
9.9 մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն .....	88
9.10 Սոցիալական հարցեր.....	89
9.11 Լանդշաֆտ. շինարարության փուլում .....	89
9.12. Բարեկարգում և կանաչապատում .....	90
10. Մոնիթորինգ.....	90
11. Բողոքների ընթացակարգ.....	91
12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան .....	92
13. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	110
14. Հանրային քննարկումներ.....	116
15. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը .....	116
Գրականություն .....	120
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	121
Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը .....	122
Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանք .....	124
Հավելված 3. Տարածքի տեղադիրքը.....	128
Հավելված 4. Թափնի համայնքապետարանի ավազանու որոշումը .....	129
Հավելված 5. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ, հայտարարություն .....	131

Հավելված 6. Պետական տուրքի անդորրագիրը ..... 137

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

<b>Հաշվետվություն</b>	Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա բնակավայրի կրթահամալիրի կառուցման տեղկապման նախագծի լրամշակված ՇՄԱԳ հաշվետվություն
<b>Պատվիրատու</b>	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ)
<b>Շինարարական ընկերություն/Նախաձեռնող</b>	«Շինվեկտոր» ՍՊ ընկերություն
<b>Շինարարական ընկերություն/Նախաձեռնողի իրավաբանական հասցեն</b>	Ք. Երևան, Հր. Քոչարի 16/6
<b>Նախատեսվող գործունեության վարչական տարածքը, փաստացի գործունեության հասցեն՝</b>	Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա բնակավայրի 2-րդ փողոց, հ. 3 դպրոց
<b>Նախաձեռնողի հեռախոս, էլեկտրոնային փոստ</b>	հեռ.055570555 կամ 093884625, ececaucasus@gmail.com

## 2. Հավելվածներ

- Հավելված 1.** Տարածքի իրավունքների պետական գրանցման վկայականը,
- Հավելված 2.** Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը
- Հավելված 3.** Տարածքի հատակագիծը
- Հավելված 4.** Թալինի համայնքապետարանի ավագանու որոշումը
- Հավելված 5.** Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ, հայտարարություն
- Հավելված 6.** Պետական տուրքի անդորրագիրը

### **3. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ**

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին /Փոփոխությունները 2023թ/Օրենքի(այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեությունները համաձայն Օրենքի դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Հաշվետվությունում նախատեսված գործունեությունը ենթակա է փորձաքննության՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի, Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ եւ ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ եւ ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»: Նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Նախնական գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

Գնահատման հաշվետվությունը կազմվել է համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

### **4. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը, Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը.**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Շինվեկտոր» ՍՊԸ-ի՝ կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Հր. Քոչարի 16/6: Հողատարածքը տրված է Զարինջայի միջնակարգ դպրոցին՝ անհատույց օգտագործման իրավունքով:

Նախատեսվող գործունեության իրականացվելու է Թալին համայնքի Ջարինա բնակավայրի վարչական տարածքում 2-րդ փողոց, թիվ 3 դպրոց հասցեում՝ 1.564հա հողամասում:

Կրթահամալիրի կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- նախագծային փաստաթուղթը,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայականները՝ N 20102021-02-0016, ներկայացված սույն հաշվետվության Հավելված 1-ում,

-Թալինի համայնքապետարանի կողմից տրված 17.05.2024թ. ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 55, ներկայացված սույն հաշվետվության Հավելված 2-ում:

Նախատեսվող գործունեության նպատակը. դպրոցի շենքի կառուցումը նախատեսվում է իրականացնել Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ջարինա գյուղական բնակավայրի գոյություն ունեցող դպրոցի տարածքում՝ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել համապատասխան ստանդարտներով և ժամանակակից պահանջներով նոր մոդուլային դպրոցի և մանկապարտեզի շենք՝ սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացնող է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏՀՀ)՝ ՀՀ կառավարության, Ասիական Ջարգացման Բանկի համավարկավորմամբ՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման մոդելով:

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

## **5. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը**

**5.1 Ենթակա տարածք.** կառուցապատման ենթակա տարածքը գտնվում Թալին համայնքի Ջարինա բնակավայրի վարչական տարածքում 2-րդ փողոց, թիվ 3 դպրոց հասցեում:

Տարածքը կառուցապատված է, առկա են շինություններ, հետևյալ մակերեսներով.

- Դպրոց՝ 2056.42մ<sup>2</sup>
- Կաթսայատուն՝ 72մ<sup>2</sup> և 16.56մ<sup>2</sup>
- Անավարտ շինություններ՝ 636.9մ<sup>2</sup> և 580.7մ<sup>2</sup>
- ս/հ՝ 7մ<sup>2</sup>

Հողամասին կից գտնվում են էլեկտրահաղորդման գծեր և գազի խողովակ:

Հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, հողամասեր և այլ տարածքներ:

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակությամբ հուշարձանները:

Տարածքին կից առկա են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը: Տարածքում բացակայում է բերրի հողը, ծառաթփային բուսականությունը:

Տարածքի իրադրության սխեման  
Նկար 1,2









- ① Կերպանոց
- ② Արևառակե ջրամբար
- ③ Գյուղպետարան
- ④ Մանկապարտեզ

Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գործունեության վայրից ամենամոտ շինությունը գտնվում է 50-67մ, արհեստական ջրամբարը՝ 210մ, ճանապարհը՝ մոտ 100մ, գերեզմանոցը՝ 440մ հեռավորությունների վրա:

«Հայր և Որդի Տիտիգյաններ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է Թալին համայնքի Զարինջա բնակավայրի նոր մոդուլային դպրոցի կառուցման ենթակա տարածքի համար երկրաբանական ուսումնասիրություններ: Կատարվել է նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն: Կատարվել են 5 հորատանցքերի հորատումներ՝ յուրաքանչյուրը՝ 10.0մ խորությամբ :

Նկար 3,4



**Գեոմորֆոլոգիական տեսակետից** Մեր ուսումնասիրվող տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա բնակավայրում:

**Շրջանի երկրաբանական պայմանները** Ըստ հորատման, ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղագնման շրջանի երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը՝ հրաբխային Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեությունն է, որի հետևանքով լեռան միջի օջախից դուրս եկող ժայթքումից է ձևավորվել սարահարթը: Հրաբխային համալիրները ներկայացված են, տուֆերով և տուֆոլավաներով, որոնք ծածկված են էրոզիոն գոյությունների շերտերով: Դրանք հիմնականում կենտրոնական տիպի չորրորդական հասակի առաջացումներ են:

Մեր ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ավազակավեր և տուֆեր:

**Կլիման** ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական



կլիմայաբանություն»-ը՝ Թալին համայնքի համար: Կլիման չափավոր ցամաքային է, շոգ ու չորային ամառներով, չափավոր ցուրտ ձմեռներով:

- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը  $38^{\circ}\text{C}$
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը  $-26^{\circ}\text{C}$
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 66 Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 350-450մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1.9մ/վ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 85սմ:

**Սեյսմիկա.** Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝  $A_{max}=0,3g$ :

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** տեղազննվող տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Ուսումնասիրվող տարածքը կազմված է մի շարք միջին չորրորդական լավային հոսքերով: Դրանցից մեկը տարածված է նաև տարածքի մատույցներում: Լավային հոսքերի վրա են տարածված տուֆային նստվածքները:

**Հիդրոերկրաբանական տեսակետից**, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ և ծակոտկենությամբ, ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ, իսկ կուտակումը՝ լավատակ հնահուններում: Տվյալ տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 10մ-ից խորը հորզոններում:

**Տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածքը.** համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման, արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտները՝ վերևից-ներքև:

Շերտ-1. Տուֆ կարմիր. վարդագույն երանգի, պինդ, հոծ: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (37) V կարգ է:

Շերտ-2. Տուֆ սև պինդ, հոծ: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (37) V կարգ է:

- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է
  - ✓ շերտ 1-ը / տուֆեր կարմիր, վարդագույն երանգի /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ գրունտներ են:
    - ✓ Դիմադրությունը  $R_0=5.0\text{կգ/սմ}^2$
    - ✓ Ընկրկելիության գործակիցը  $K_{\rho}$ - 10000տ/մ<sup>3</sup>

- ✓ շերտ 2-ը / տուֆեր սև/, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ գրունտներ են:
  - ✓ Դիմադրությունը  $R_0=5.0կգ/սմ^2$
  - ✓ Ընկրկելիության գործակիցը  $K_{\rho}= 10000տ/մ^3$

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատամամշակությամբ հուշարձանները:

## **5.2 Շրջակա միջավայրի բնութագրերը**

### **5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Թալին համայնքի վարչական տարածքում: Արագածոտնի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևմուտքում: Մարզը հյուսիսից սահմանակից է Շիրակի և Լոռու մարզերին, արևելքից՝ Կոտայքի մարզին, հարավում՝ Արմավիրի մարզին և ք. Երևանին, իսկ արևմուտքում պետական սահմանով՝ Թուրքիային: Թալինի տարածաշրջանի մի մասը գտնվում է նախալեռնային գոտում, իսկ մյուս մասը՝ լեռնային գոտում, ծովի մակերեսային 2000-2500 մետր բարձրության վրա:

Նկար 5




Տարածաշրջանի մակերևույթի մեծ մասը կազմված է տարբեր տիպի ու բնույթի երիտասարդ հրաբխային լավաներից: Այստեղ են գտնվում Թալինի, Կարմրաշենի, Ապարանի սարավանդները, որոնց մակերևույթին բնորոշ են խարամային կոները, տուֆային դաշտերը, քարակարկառները: Երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային է, սարահարթը ձևավորվել է Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեության հետևանքով լեռան օջախից դուրս եկող ժայթքումից: Հրաբխային համալիրները ներկայացված են անդեզիտա-բազալտներով, դացիտներով, տուֆերով և տուֆոլավաներով, որոնք ծածկված են էրոզիոն գոյացությունների շերտերով: Դրանք հիմնականում կենտրոնական տիպի չորրորդական առաջացումներ են: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաէրոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմնահարությունը:

### 5.2. 2. Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04\_ 2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ Թալինի համայնքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում, գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են  $A=0.3g$ :

Գծապատկեր 1



### 5.2.3. Կլիմա և օդային ավազան

Արագածոտնի մարզի և հատկապես նախատեսվող գործունեության տարածքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 37.5°C, առավելագույն բացասականը՝ -26.1°C : Տարեկան տեղումների առավելագույն քանակը կազմում է 434 մմ: Օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 66%: Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Թալին քաղաքի համար, որպես խոշորացված համայնք:

Աղյուսակ 1.

Օդի միջին ջերմաստիճանը, °C

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,  
ՁՄՈՒՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
15. Թալին	-5.7	-4.1	1.0	7.5	12.3	16.7	20.8	21.0	16.7	10.2	3.3	-2.9	8.1	-26.1	37.5

Օդի հարաբերական խոնավությունը

Աղյուսակ 2.

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
15. Թալին	77	75	69	66	66	60	55	52	54	63	73	78	66	77	73	52	44	

Մթնոլորտային տեղումները

Աղյուսակ 3



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը ————— մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
15. Թալին	23	25	37	60	77	51	35	22	20	36	25	23	434	133	301
	21	22	38	36	37	63	58	44	27	36	22	19	63		


**Քամի**

Աղյուսակ 4.

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Մնորորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
19. Թալին	հունվար	29	9	13	27	11	3	3	5	50	1.5	ՀվԱրլ	3.2	ՀվԱրլ	2.9
		2.4	2.2	2.6	2.9	2.1	2.2	2.6	3.6						
	ապրիլ	22	8	13	27	15	4	4	7	33	2.2				
		3.3	2.4	2.6	3.6	2.9	3.5	3.2	4.1						
	հուլիս	31	8	9	25	12	3	3	9	36	2.2				
		3.5	2.6	2.4	3.2	2.4	2.7	2.7	4.1						
	հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7	42	1.8				
		2.9	2.2	2.4	3.0	2.2	2.8	2.7	3.9						

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Թալին համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա՝ ցուրտ կլիմայական գոտում: Ամառը՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0- 6.0 մ/վ Ձմեռը՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ:



Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ համեմատությամբ: Զարինջա բնակավայրի մթնոլորտային օդի որակի արդյունքերն ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. եռամսյակային տեղեկագրերում բացակայում է, ուստի ներկայացվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայք էջի՝ Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» օդի ֆոնային կոնցենտրացիաներն են.

**Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»**

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Զարինջա գյուղի բնակչությունը պատկանում է մինչև 10000 բնակիչ ունեցող բնակավայրերի թվին:

#### 5.2.4. Հողային ռեսուրսներ

ՀՀ Արագածոտնի մարզը ՀՀ այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները (950 մ-ից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունները): ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ) և Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ), Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները: Մարզի ռելիեֆը գրավիչ է

ինչպես դահուկային սպորտի, այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար: Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Մարզի 19 համայնքներ ունեն լեռնային, իսկ 40 համայնքներ՝ բարձր լեռնայինի կարգավիճակ:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Արագածոտնի մարզի նախալեռնային հատվածերում հողաձածկույթը կազմում են կիսաանապատային գորշ, ինչպես նաև բաց և տիպիկ լեռնային շագանակագույն հողերը: Ըստ մեխանիկական կազմի հիմնականում միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,3-1,33 գ/սմ<sup>3</sup> սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,53-2,72 գ/սմ<sup>3</sup> սահմաններում:

Արագածոտնի մարզի 1400-1500մ բարձրությունների վրա տեղաբաշխված է չոր լեռնատափաստանային հատվածները: Հողաձածկույթը կազմում են տիպիկ և մուգ լեռնային շագանակագույն, ինչպես նաև տիպիկ լեռնային սևահողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,22-1,25 գ/սմ<sup>3</sup> սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,6-2,63 գ/սմ<sup>3</sup> սահմաններում:

1500 մետրից ավելի բարձրությունների վրա՝ բարձր լեռնատափաստանային տարածքներն են: Հողաձածկույթը կազմում են կրագերծված լեռնային սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են:

Տարածաշրջանի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քարակարկառներով ու լերկ ժայռերով: Որոշ վայրերում հանդիպում են կաղնու ոչ ընդարձակ անտառակներ:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը՝ 4313.0 հա է: Համայնքի արևելյան հատվածի հողաձածկույթը խիստ աղքատիկ է: Այս տարածքները ներկայացված են խիստ կտրտված թեք լանջերով, հողերը՝ էրոզացված են:

Նկար 8.





Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտատույն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. հրապարակված տարեկան և 2023թ. 4-րդ եռամսյակի տեղեկագրերում Արագածոտնի մարզի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

### 5.2.5. Ջրային ռեսուրսներ

Մարզի ջրային պաշարները գոյանում են Արագած լեռան ձնահալոցքից, տեղումներից և բնական աղբյուրներից: Մարզում բազմաթիվ են լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները: Ջրային պաշարներից սնվում են Ապարան-Երևան և Ապարան-Սպիտակ ջրատարները: Արագածոտնի մարզում ստորգետնյա ջրերը գտնվում են 120-150մ խորության վրա:

Մարզի հիմնական զարկերակը Քասախ գետն է՝ երկարությունը 89 կմ, ավազանի մակերեսը՝ 1480 քառ. կմ, Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով: Մարզի տարածքով

են հոսում նաև Հալավար, Գեղաձոր (երկարությունը 34 կմ է, ջրհավաք ավազանը՝ 144 քառ. կմ), Շահվերդ, Ամբերդ և Գեղարոտ գետերը:

Կան շատ հեղեղատարեր (նշանավոր է Մաստարայի հեղեղատարը): Մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի, Սաբունջիի ջրամբարները: Ամենամեծը Ապարանի ջրամբարն է. մակերեսը 7.0 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ<sup>3</sup>, օգտակարը՝ 81 մլն.մ<sup>3</sup>, ջրթողունակությունը վայրկյանում՝ 18 մ<sup>3</sup>: Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85 մլն.մ<sup>3</sup>, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս է գալիս մարզի տարածքից:

**Թալինի ջրանցք:** Ջրանցքը գտնվում է Հայաստանի Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Սկիզբ է առնում Ախուրյանի ձախ ափից: Մնվում է Ախուրյան ջրամբարի ամբարտակված ջրերից:


Առաջին հերթը շահագործման է հանձնվել 1957թ., երկրորդը՝ 1974թ., երրորդը՝ 1986թ.: Մայր ջրանցքի երկարությունը 91 կմ է, բաժանարար ցանցինը՝ 118 կմ: Մայր ջրանցքը բաժանվում է աջ և ձախ ճյուղերի: Ջրթողունակությունը 30 մ<sup>3</sup>/վ է: Ոռոգում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի մոտ 24 հազար հեկտար հողատարածք:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքեր չկան:


Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգեոտեխնիկական և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Մակերևութային ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ներկայացվում է գործունեության տարածաշրջանի մակերևութային ջրերի որակի բնութագիրը՝ համաձայն «Հիդրոոգեոտեխնիկական և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի՝

Նկար 9.



**ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը**



Նախատեսվող գործունեության տարածքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան:

**5.2.6. Կենսաբազմազույություն.**

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է,



որտեղ առանձնացվում են 5 հիմնական լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն:

Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Նկար 10



**Բուսական աշխարհ:** Տարածաշրջանին բնորոշ է կիսաանապատային և տափաստանային բուսածածկույթը: Տարածքի բուսականությունը ներկայացված է հիմնականում կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և տափաստանային մոլախոտային բուսականությամբ:

Տարածաշրջանում աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Արագածոտնի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի

ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն:

Թալինի տարածաշրջանում առկա են Կարմիր գրքյան հետևյալ տեսակները՝ Խլոպուզ Գրոյտերի *Merendera greuteri* Gabrielian, Կատեգորիա՝ CR B 1 ab(i,ii,iii,v) + 2 ab(i,ii,iii,v), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, Տուղտավարդ Սոֆիայի *Alcea sophiae* Iljin՝ EN B 1 ab(iii) + 2 ab(iii), վտանգված տեսակ: Զարինջա բնակավայրի տարածքում հնարավոր է նաև առկա լինի ճակնդեղ բաժանապտուղ(*Beta lomatogona* Fisch.et C.A.Mey) և Տերեփուկ Թախտաջյանի(*Centaurea raktajanii* gabrielian Tomjan) կրիտիկական վիճակում գտնվող տեսակները:



Նկար 11. Խլոպուզ Գրոյտերի



Նախատեսվող գործունեության տարածաշրջանը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, ուսականությունը գրեթե բացակայում է: Գործունեության տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գնացված բուսատեսակներ կամ դրանց աճելավայրեր չկան:

**Կենդանական աշխարհ:** Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր:

Սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:

Տարածաշրջանում կան մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը կամ որոշ թռչնատեսակներ):

Սողունների և երկկենցաղների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստացվել է գրականության հիման վրա: Կապված բնական լանդշաֆտների ոչնչացման հետ, ինչի արդյունքում ոչնչացվեցին սողունների և երկկենցաղների բնական ապրելավայրերը, նրանց տեսակային կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել: Տարածքում առկա են սողուններից՝ Կույր օձ (*Typhlops vermicularis*), Վզնցավոր(էյրենիս *Eirenis collaris*), Գյուրգա(*Vipera lebetina*), Կովկասյան ազամա(*Laudakia caucasica*), երկենցաղներից՝ կանաչ դողոշ(*Bufo viridis*) կենդանատեսակները:

Տարածքում ՀՀ Կարմիր գրքի կենդանատեսակներից հայտնի անաղոնաշարավորներից՝ Գնայուկ բզեզներ(*Carabidae*), Թերթիկաբեղավորներ (*Scarabaeidae*), Սևամարմիններ(*Tenebrionidae*), Տերևակերներ(*Chrysomelidae*), Սիմպեկմա ճպուռ (*Sympecma paedisca*), Մորեխ հայկական(*Gomphocerus armeniacus*), Բոուդենի ճերմակաթիթեռ(*Artogeia bowdeni*), Պորչինսկու իշամեղու (*Bombus portshinskii* Radoszkowsky) և այլն:

Կարմիր գրքյան կենդանատեսակներից է՝ Բալդրան(*Falco cherrug* J. E. Gray, 1834), Բազեանմանների կարգից, Հայաստանի համար անհետացող տեսակ է, որն ընդգրկված է



ԲՊՄՄ Կարմիր ցուցակում՝ (ver. 3.1) «Endangered A2bcd+3cd+4bcd» կարգավիճակով:



Նկար 13. Բալորան

Ուսումնասիրվող և հարակից տարածքները, մարդու գործունեության արդյունքում, բավականաչափ յուրացված են, բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգերը, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակները, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

#### **5.2.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ .**

Մարզի տարածաշրջանում է գտնվում Արագածի ալպյան արգելավայրը, բնության հատուկ պահպանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 27 պետական արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում՝ Արագած լեռնազանգվածի 3200-3500 մ բարձրություններում: Ստեղծվել է սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Նկար 14.



Գործունեության տարածքը գտնվում է Ալայան արգելավայրից գտնվում է բավականին մեծ հեռավորության վրա :

«Ագարակ» պատմամշակութային արգելոց»-ը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակ և Ոսկեհատ գյուղական համայնքների վարչական տարածքներում, Երևան-Աշտարակ-Գյումրի մայրուղու երկու կողմերում, Ամբերդ գետի աջ ափին, հրաբխային տուֆե ելուստներից կազմված ժայռոտ հրվանդանի վրա: Հուշարձանի /պետ. ցուցիչ՝ 2.4.1/ հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ բնակատեղիի ողջ տարածքը և շրջակայքն ամբողջությամբ պատված են ժայռափոր ու քարակոփ կառույցների հսկայածավալ համալիրներով, որոնց մեծ մասը շաղկապվում է Ագարակի վաղ բրոնզեդարյան բնակատեղիի հետ: Առկա են ժայռափոր խորշեր, դեպի այդ խորշերը տանող աստիճանահարթակներ և այլ նշանակության կերտվածքներ: Բոլոր այդ կերտվածքների, ինչպես նաև շրջանածև, պայտածև, մեանդրածև փորվածքների, այդ փորվածքները միմյանց կապող առվակների կամ եռագագաթ, սեղանածև զոհարանների շնորհիվ բնական լանդշաֆտը վերածվել է հսկա կոթողի:

**5.2.8. Պատմության և մշակութային հուշարձաններ**

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Թալին քաղաքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

Թալին քաղաք

Աղյուսակ 5

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ	քարի դար	Արտին լեռան հս-աե լանջին	<	«Սատանի դար» վայրում
2.				ԲՆԱԿԱՏԵՂԻ	մթա 2-1 հզ մ	1,5 կմ աե-հս.	<	Արալի դաշտում, Կարմրաշեն տանող ճանապարհից 0,5 կմ աջ
	2.1.			դամբարանադաշտ	մթա 4-2 հզ մ		<	Կարմրաշեն տանող ճանապարհի խաչմերուկին հարող հատվածում
3.				ԴԱՄԲԱՐԱՆ ԹԱԼԻՆԻ ՄԵԾ	մթա 4-3 հզ մ	աե եզրին	<	Երևան-Թալին ավտոճանապարհից ձախ

4.		ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԹԱԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ	4-20 դդ.	հս մասում	<	
	4.1.	Եկեղեցի	5 դ.		<	Կաթողիկեից հս, պահպանվել են միայն հիմնապատերը
	4.2.	Կաթողիկե	7 դ.		<	
	4.3.	պալատ	9-11 դդ.		<	Կաթողիկեից 150 մ հվ-աե
	4.4.	գերեզմանոց	4-20 դդ.		<	Կաթողիկեի շուրջը
	4.4.1	կոթող	4-5 դդ.		<	Կաթողիկեի հվ կողմում
	4.4.2	կոթող	4-5 դդ.		<	Կաթողիկեից 30 մ հվ-ամ, պահպանվել է պատվանդանը
	4.4.3	կոթող	4-5 դդ.		<	Կաթողիկեի հս կողմում, պահպանվել է պատվանդանը
	4.4.4	կոթող	4-5 դդ.		<	Կաթողիկեի հվ կողմում
	4.4.5	կոթող	4-7 դդ.		<	Կաթողիկեի հվ-աե կողմում
	4.4.6	կոթող	4-7 դդ.		<	Կաթողիկեի հվ-աե կողմում
	4.4.7	կոթող	4-7 դդ.		<	Կաթողիկեի հվ-աե կողմում, պահպանվել է պատվանդանը
	4.4.8	կոթող	4-7 դդ.		<	Կաթողիկեի հվ-աե կողմում
	4.4.9	խաչքար	9-10 դդ.		<	Կաթողիկեից 35 մ հս-ամ, երկատված, ընկած գետնին
	4.4.10	խաչքար	10 դ.		<	Կաթողիկեից 20 մ հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
	4.4.11	խաչքար	10-11 դդ.		<	Կաթողիկեից հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը և վերնամասի ձախ անկյունը՝ կոտրված
	4.4.12	խաչքար	10-11 դդ.		<	Կաթողիկեից 25 մ հս-ամ, ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
	4.4.13	խաչքար	11դ.		<	Կաթողիկեի հս-ամ կողմում, ընկած գետնին

	4.4.14	խաչքար	13-14 դդ.		<	Կաթողիկեի ամ կողմում, կանգնեցված գետնին
5.		ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	613- 615 թթ.	ք.մ.	<	
	5.1.	կոթող	4-5 դդ.		<	Եկեղեցու հս-ամ կողմում
	5.2.	կոթող	4-7 դդ.		<	Եկեղեցու հս կողմում, պահպանվել է միայն պատվանդանը
	5.3.	կոթող	5-6 դդ.		<	Եկեղեցու հվ կողմում, պահպանվել է միայն պատվանդանը
	5.4.	կոթող	5-6 դդ.		<	Եկեղեցու հս-ամ կողմում, խիստ քայքայված
	5.5.	կոթող	6-7 դդ.		<	Եկեղեցու հս-ամ կողմում, վերին և ստորին մասերը՝ կոտրված
	5.6.	խաչքար	10-11 դդ.		<	արձանագիր, եկեղեցու խորանում
	5.7.	տապանաքար	874 թ.		<	Եկղ-ուց 10 մ հվ-ամ, կոտրված՝ 6 մասի
	5.8.	տապանաքար	9-10 դդ.		<	Եկղ-ուց 10 մմ հվ-ամ, արձանագիր
6.		ԵԿԵՂԵՑԻ Ս. ԳԵՎՈՐԳ	19 դ.	ք.մ.	S	
	6.1.	զանգակատուն	19 դ.		S	կից է եկեղեցուն ամ-ից
	6.2.	խաչքար	10 դ.		<	ագուցված ամ ճակատին, արտաքուստ, մուտքից աջ
	6.3.	խաչքար	13 դ.		<	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից աջ
	6.4.	խաչքար	13 դ.		<	ագուցված աե ճակատին, արտաքուստ
	6.5.	խաչքար	19 դ.		S	ագուցված հվ ճակատին, արտաքուստ, մուտքից ձախ
7.		ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՎՎԱԾՆԵՐԻՆ	1946 թ.	ք.մ.	S	քաղաքի սկզբնամասում, ճարտ.՝ Ո. Իսրայելյան
8.		ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ	1979 թ.	հս մասում	S	բարձունքի վրա

			ԶՈՎԱԾՆԵՐԻՆ			
9.			ՄԱՏՈՒՌ «ՍԱՆԴՈՒԿՏ ԿՈՒՅՍ»	19 դ.	ամ եզրին	S վրկնգ՝ 1991- 1992 թթ.՝ Ամիրբեկ Դերգյանի կողմից
	9.1.		խաչքար	7-8 դդ.		< մատուռի ներսում
	9.2.		խաչքար	7-8 դդ.		< մատուռի ներսում
	9.3.		խաչքար	8 դ.		< մատուռի ներսում, Թալինի հանրահայտ կլոր խաչքարն է
	9.4.		խաչքար	8-9 դդ.		< մատուռի ներսում
	9.5.		խաչքար	10 դ.		< մատուռի ներսում
10.			ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	19-20 դդ.	1 կմ հս-աե	S Արալըղի դաշտում, Կարմրաշեն տանող ճանապարհից աջ, պահպանված ջրաղացների թիվը մոտ. 30 է
11.			ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԹԱԼԻՆ	մթա 2-1 հզ մ, մջնդ	հս մասում	< «Ջուլիակ» բլրի ստորոտին
	11.1		ամրոց Թալին	մթա 4 դ., 12-16 դդ.		< «Ջուլիակ» բլրի վրա
	11.2		դամբարանադաշտ	մթա 2-1 հզ մ, մթա 4-3 դդ.		< «Ջուլիակ» բլրի շուրջը, Ս. Կաթողիկե եկեղեցուց հս
	11.3		ջրամբար	մթա 1 հզմ, վաղ մջնդ		< ամրոցից հս, Թալին-Մաստարա հին ճանապարհին, Ս. Կաթողիկե եկեղեցուց 500 մ հս
12.			ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ. ԹԱԼԻՆԻ ՄԵԾ	13 դ.	հվ-աե եզրին	< «Չայիր» վայրում, նախկինում սխավմամբ ներկայացվել է Դաշտադեմ գյուղով

Կարևոր է Թալինի դամբարանադաշտը (գերեզմանատուն), որը գտնվում է Թալինի քաղաքամերձ տարածքի Հարավ-արևելքում՝ Թալին- Գյումրի ճանապարհի երկայնքով:

Նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային հուշարձանները բացակայում են: 500մ հեռավորության վրա՝ Թալին-Դաշտադեմ ճանապարհին կից գտնվում է ամենամոտ պատմամշակութային հուշարձանը՝ Թալինի քարավանատունը:



Գործունեության տարածքը չի առնչվում նշված պատմամշակութային հուշարձանների հետ:

**1.44 ԶԱՐԻՆՁԱ գյուղ**

1	2	3	4	5	6	7	8
1			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	17-18 դդ.	գյուղից 3 կմ ան, Զարինջա-Մաստարա ճանապարհից 1 կմ ձախ, «Յայլի կոնդ» վայրում	î	1
2			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄ ԱՐՏՈՒՄ  ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1982 թ.	գյուղի ան մասում, բարձունքի վրա	î	3
3			ԶՐԱՂԱՅՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	17-18 դդ.	գյուղից 1 կմ հս-ան	î	4

**5.2.9. Բնության հուշարձաններ.**

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման հավելվածի՝ Արագածոտնի մարզում առկա են. 23 բնության հուշարձաններ, որից 10 հատ՝ երկրաբանական, 4 հատ ջրաերկրաբանական և 4 հատ ջրագրական, 5 հատ բնապատմական հուշարձաններ:

Աղյուսակ 6

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
	Երկրաբանական հուշարձաններ	
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ

	առանձնահատուկ ներփակումներ	3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
9.	«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
11.	«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870 մ բարձրության վրա
12.	«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
13.	«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5 կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9 մ-ից 3000 մ բարձրության վրա
14.	«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
15.	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
16.	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
17.	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8

		կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
18	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ
	Բնապատմական հուշարձաններ	
19	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
20	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
21	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
22	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
23	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

Գործունեության վայրին ամենամոտ բնության հուշարձանը «Տատիկ» քարե քանդակ երկրաբանական հուշարձանն է՝ մոտ 2,5 կմ հեռավորության վրա:

#### **5.2.10. Սոցիալ-տնտեսական հարցեր .**

Արագածոտնի մարզի տարածքը կազմում է 2773քառ. կմ, որը կազմում է ՀՀ տարածքի 9,3%-ը: Ներառում է 8 համայնք, 3 քաղաքներ և 118 գյուղական բնակավայրեր: Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկզբի դրությամբ կազմում է 125,7 հազ. մարդ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 218,813,6հա, որից վարելահողերը՝ 54,352,2հա:

Տարածքը Territory	2 773 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the RA, %	9.3
Համայնքներ, 2023թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2023	8
Քաղաքներ Towns	3
Գյուղեր Villages	118
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	125.7 հազ. մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
Քաղաքային urban	26.8 հազ. մարդ/ ths. person
Գյուղական rural	98.9 հազ. մարդ/ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ., % Share of marz population in the total population of the RA 2022, %	4.2
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ., % Share of urban population size 2022, %	21.3
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	218 813.6 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	54 352.2 հա/ ha

Մարզի տնտեսության հիմնական ուղղությունը արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն են: Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և խմիչքների, ըմպելիքների թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Համաձայն ՀՀ Վիճակագրության կոմիտեի կայք էջի՝ 2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.2 %,
- գյուղատնտեսություն 9.9 %,
- շինարարություն 4.7 %
- մանրածախ առևտուր 1.8 %
- ծառայություններ 0.7 %:

Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիներ՝ Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

**Թալին համայնք.** Թալին խոշորացված համայնքի կազմում են գտնվում Թալին, Ագարակավան, Ակունք, Աշնակ, Գառնահովիտ, Դաշտադեմ, Դավթաշեն, Դիան, Եղնիկ, Զարինջա, Զովասար, Թաթուլ, Իրինդ, Ծաղկասար, Կաթնաղբյուր, Կարմրաշեն,

Կաքավաճոր, Հացաշեն, Մաստարա, Ներքին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Նոր Արթիկ, Շղարշիկ, Ոսկեթաս, Պարտիզակ, Սուսեր, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ցամաքասար, Արագածավան բնակավայրերը համաձայն Թալին համայնքի 2023-2027թթ. 5-ամյա զարգացման ծրագրի՝ Թալին համայնքը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան փեշերին, ծովի մակերևույթից 1585 մետր բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 70 կմ, մարզկենտրոն Աշտարակ քաղաքից՝ 48 կմ: Թալին համայնքը նախկինում եղել է Թալինի շրջանի վարչական կենտրոնը: Տարածքը քարքարոտ է, կան շատ բլուրներ, ձորեր, լեռներ և անհարթ տարածություններ:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են, հիմնականում ցամաքային և ոչ բարենպաստ են գյուղատնտեսության համար: Հողերը հիմնականում ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը չափավոր ցուրտ է, ամառը զով, երբեմն էլ շոգ ու երաշտ: Գարունը շուտ է բացվում, աշունը ուշ վերջանում: Ձնածածկույթը տարածքում տևական չի լինում, ուղեկցվում է բքի վերածվող ուժեղ քամիներով: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 400-450 մմ-ի սահմաններում:

Թալին համայնքով է անցնում Հյուսիս-Հարավ միջպետական նշանակության ավտոմայրուղին, Հյուսիս-Հարավ մայրուղին և Գյումրի-Երևան երկաթգիծը: Համայնքում կան երեք արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից մեկը զբաղվել է ադամանդե քարերի մշակմամբ, ունենալով բավականին մեծ արտադրական հզորություն, ներկայումս չի գործում, իսկ մյուս երկուսը գործում են, որոնցից մեկը զբաղվում է կաթնամթերքի արտադրությամբ, իսկ մյուսը զբաղվում է հակակարկտային կայանների արտադրությամբ: Այս երկու գործող ձեռնարկությունները իրենց արտադրանքը հիմնականում սպառում են Հանրապետության տարածքում:

Համայնքում առկա է ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը, կապի և փոստային ծառայությունները: Արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը՝ հացահատիկն է (ցորեն և գարի), կաթը և միսը: Արտադրանքի ծավալները մեծ չեն, հիմնականում ունեն սեփական սպառման նշանակություն: Համայնքի բնակավայրերուի մեծ մասում ոռոգման ջուրը բացակայում է,

Թալին համայնքը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և պատմական հարուստ ժառանգության, հնարավորություն ունի վերածվելու տուրիստական վայրի: Համայնքի զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող պատմա-մշակութային հուշարձաններից են Թալին քաղաքում գտնվող Կաթողիկե եկեղեցին, Իջևանատունը (Քարվանատուն), Սուրբ Աստվածածին և Սուրբ Գևորգ եկեղեցիները:

Թալին համայնքի վարչական տարածքում գործում են 11 հիմնական, 25 մրջնակարգ դպրոցներ, Թալինի ավագ դպրոցը և Արագածոտնի տարածքային պետական քոլեջը: Համայնքն ունի նորակառույց մարզադպրոց և ֆուտբոլի մարզադաշտ, մեկ մշակույթի կենտրոն, որտեղ գործում են ժամանակակից և ժողովրդական երգի-պարի խմբեր, 2 զբոսայգի՝ մեկը քաղաքային, մեկը մանկական:

Համայնքում աղբահանությունը կատարվում է կենտրոնացված աղբավայրերում, որտեղ

պարբերաբար կատարվում է բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: **Թալին քաղաքը** գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին, Երևան քաղաքից 65կմ հեռավորության վրա: 2023թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչությունը կազմում է 4,1հազ. մարդ: Տնտեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը, առկա է բնական ադամանդի մշակությամբ զբաղվող ձեռնարկություն: Զարգացած է սննդի արդյունաբերությունը: Ունի Չանախ տեսակի պանրի և կաթնամթերքի գործարան: Համախառն արտադրանքի մեծ մասը տալիս է գյուղատնտեսությունը: Համայնքում արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հացահատիկն է (ցորեն, գարի), կաթը և միսը: Արտադրանքի ծավալները մեծ չեն, հիմնականում ունեն սեփական սպառման նշանակություն: Զարգացած է անասնապահությունը, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Քաղաքը հարուստ չէ մշակութային օջախներով, ունի մեկ մշակութային կենտրոն:

Համայնքի և քաղաքի հիմնախնդիրներից են՝ ոռոգման ջրի և ջրամատակարարման ցանցի անբավարար վիճակը կամ բացակայությունը, գյուղատնտեսական տեխնիկայի անբավարար վիճակը, ներքաղաքային ճանապարհների անբավարար վիճակը, արդյունաբերական ձեռնարկությունների ոչ լրիվ հզորությամբ գործելը, գործազրկության և արտագաղթի բարձր մակարդակը:

**Զարինջա բնակավայր.** գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 67 կմ հյուսիս-արևմուտք: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ ու գյուղատնտեսությամբ՝ դաշտավարությամբ: Գյուղի հյուսիսային մասում է գտնվում Աբ. Խաչ (Կարմիր վանք) եկեղեցին (VII դար), 3 կմ արևելքում՝ Կոնդ գյուղատեղին (XVII-XVIII դարեր): Զարինջայում մինչ օրս պահպանվում է 7-րդ դարից մեզ հասած Կարմիր Վանք եկեղեցին:

Ունի դպրոց, ակումբ: Զարինջեցիների նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանից: Բնակչությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 649 մարդ:

Հիմնախնդիրներից են ոռոգման և խմելու ջրի մատակարարումը, գործազրկությունը, ճանապարհների նորոգումը:

## **6. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ), շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ),**

Նախատեսվող գործունեությունը՝ նոր մոդուլային դպրոցի կառուցումն է: Նախատեսվում է կառուցել 200 աշակերտի համար տիպային կրթահամալիր: Դպրոցը նախագծվել են Հայաստանի գյուղական վայրերի համար: Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից՝ երկհարկամի հիմնական դպրոցի

մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից և մանկապարտեզից, կաթսայատուն, մարզադաշտ, կեղտաջրերի մաքրման համար տեղադրվելու է մաքրման կայան:

## **6.1 Շահագործման փուլ.**

### **6.1.1 Մոդուլային դպրոցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.**

Նախատեսվում է կառուցել տիպային կրթահամալիր՝ 200 աշակերտի համար դպրոց և 40 երեխայի համար մանկապարտեզ: Համալիրը նախագծվել է Հայաստանի գյուղերի համար: Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված շենքերից՝ երկահարկանի հիմնական դպրոցի, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքերից և մեկ հարկանի մանկապարտեզից:

Համաձայն նախագծային լուծումների նախատեսվում է կառուցապատում՝ 35% կանաչապատում՝ 50%:


Տարածքի մակերեսն ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի կազմում է 1.564հա: Ճարտարապատեհատակագծային առաջադրանքի և նախագծային ցուցանիշների միջև առկա է անհամապատասխանություն, որն առաջացել է գեոդեզիական չափագրումների արդյունքում: Այսինքն նախագիծը կազմվել է տարածքի իրական մակերեսի հաշվարկով: Այդ անհամապատասխանությունը կուղղվի համալիր փորձաքննության ժամանակ՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության վկայականում, ճարտարապատեհատակագծային առաջադրանքում:

Նախագծով նախատեսված է .

- Կառուցապատման ընդհանուր տարածքը՝ 1.564հա
- Կառուցապատման ընդհանուր մակերեսը 2115.90մ<sup>2</sup>(13.80%)
- Անջրանցիկ տարածքների մակերեսը՝ 2529.0մ<sup>2</sup>
- Կանաչապատման մակերեսը՝ 6602.70մ<sup>2</sup>(43.15%)
- Արևային վահանակներ տարածք՝ 3134.8մ<sup>2</sup>
- Բաց սպորտհրապարակ՝ 540.մ<sup>2</sup>
- Ջերմոց՝ 32մ<sup>2</sup>
- Ազատ տարածք՝ 685.6մ<sup>2</sup>
- Մարզադահլիճ՝ 24.7մx18.0մ չափերով
- Դպրոցի հարկայնությունը՝ 2 հարկ/3,30մ/
- Մանկապարտեզի հարկայնությունը՝ 1 հարկ
- Նկուղային հարկ՝ 21.6x20.մ չափերի
- Ավտոկայանատեղի՝ մոտավոր 5 մեքենայի համար
- Աշակերտների թիվը՝ 200 , երեխաներ՝ 40

Կառույցը բաղկացած է 3 մասնաշենքից, որոնք իրարից անջատված են հակասեյսմիկ կարանով՝

- o դպրոցի մասնաշենք՝ - 1 -:- 9 առանցքներում,
- o մանկապարտեզի մասնաշենք՝ - 3\* -:- 1\* առանցքներում:
- դահլիճների մասնաշենք՝ 10-:-13 առանցքներում:



Դպրոցի մասնաշենքը ուղղանկյուն է՝ 43.8x20.4մ առանցքային չափերով: Շենքը 2 հարկանի է, 2 -:- 6 առանցքներում ունի նկուղային հարկ, որը ծառայում է, որպես պարզագույն թաքստոց: Հարկերի բարձրությունը 1-:-9 առանցքներում 3.30մ է:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է: Հիմնակմախքը իրականացված է տարածական շրջանակակապային համակարգով միաձույլ երկաթբետոնից: Հիմնակմախքի լայնական շրջանակները 1-:-9 առանցքներով 3 և 4 թռիչքանի են՝ 1.60, 6.80մ: Լայնական շրջանակների քայլը՝ 5.40, 6.00:

Մանկապարտեզ. Մանկապարտեզի մասնաշենքը ուղղանկյուն է, 13.6 x 24.2մ առանցքային



չափերով: Այն 2 հարկանի է, հարկերի բարձրությունը 3,30մ է: Նախատեսված է երկու խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ:

Կրթահամալիրը բաղկացած է երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերից: Կրթահամալիրը բաղկացած է լինելու երկու մասից՝ դպրոց և մանկապարտեզ, որոնք համապատասխանաբար ունենալու են .

- Պահակակետ – 1
- Ռեկրեացիա – 3
- Դասասենյակ – 16
- Քիմիայի կաբինետ - 1
- Օժանդակ սենյակ - 3
- Ֆիզիկայի կաբինետ - 1
- Տնօրենի կաբինետ - 1
- Բժշկի կաբինետ - 2
- Մարզիչի սենյակ - 1
- Տղաների հանդերձարան - 1
- Աղջիկների հանդերձարան - 1
- Պահոց - 4
- Մարզասրահ - 1
- Սպորտային գույքի պահեստ - 1
- Հանդիսությունների սրահ - 1
- Բեմ - 1
- Սանհանգույց տղաների – 3
- Սանհանգույց աղջիկների – 3
- Սանհանգույց հաշմանդամների – 3
- Բուֆետ - 1
- Խոհանոց - 2
- Սանհանգույց աշխատակիցների համար - 2
- Ուսմասվարի սենյակ - 1
- Ուսուցչանոց - 1
- Ռոբոտատեխնիկայի դասասենյակ - 1
- Ռազմագիտություն - 1
- Չենքի պահոց - 1
- Ինֆորմատիկայի կաբինետ - 1
- Գրադարան - 1
- Բուժկետ - 1
- Ջրի ռեզերվուար - 1
- Վարիչի կաբինետ - 1

- Խաղասենյակ - 5
- Ննջասենյակ - 5
- Խոհանոց - 4
- Սանհանգույց աշխատակիցների համար - 2
- Դաստիարակների սենյակ - 2
- Հանդերձարան - 3
- Սանհանգույց ցնցուղով - 4
- Հանդիսությունների դահլիճ - 1

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է: Հիմնակմախքը իրականացված է տարածական շրջանակակապային համակարգ միաձույլ երկաթբետոնից: Հիմնակմախքի լայնական շրջանակները 3\*:-1\* առանցքներով 4 թռիչքանի են (թռիչքները՝ 6.00, 6.80, 5.40, 6.00մ), իսկ երկայնական շրջանակները 2 թռիչքանի (թռիչքները՝ 6.80մ):

Հանդիսությունների դահլիճ՝ 144 նստատեղի համար: Մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսվում է 60 տեղանոց տրիբունա: Մարզադահլիճի առանցքային չափերն են՝ 24.7մx18.0մ, առանցքային չափերով: Այն մեկ հարկանի է կառույց է, փոփոխական բարձրությամբ՝ 6.100-:-8.800մ: Կառույցի լայնական մեկ հարկանի շրջանակները իրականացված են միաձույլ ե/բ սյուներով՝ 60,0x30,0սմ, մետաղական ֆերմաներով /1.8մ բարձրությամբ/: Լայնական շրջանակների քայլը՝ 3.00, 3.40, 4.30մ: Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կակինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը:

Նկուղային հարկ.Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6x20.4մ, որը օգտագործվելու է որպես թաքստոց: Նկուղային հարկում տեղակայված են գրադարանը գրապահոցով և ընթերցասրահով, որտեղ տեղադրված են համակարգիչներ և պատճենահանող սարքեր, կաթսայատունը, էլեկտարական վահանակը, սանհանգույցներ և բուժկետը: Թաքստոց տանող աստիճանը հագեցված է աստիճանային ամբարձիչով հաշմանդամների համար:

Շինության բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով, ունի նաև հարկերը կապող միջհարկային ամբարձիչ՝ հաշմանդամների համար նախատեսված: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:

Արտաքին երեսապատում. շենքի ճակատի խարսխային մասը երեսապատված է բազալտե սալերով: Նախագծով նախատեսված է ճակատները երեսապատել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ սալերով, գործարանային ներկածածկույթով: Մարզասրահի, հանդիսությունների դահլիճների և նախակրթարանի մասնաշենքի մուտքերը շեշտված են ֆիբրոցեմենտային այլ երանգի սալերով: Տանիքի ծածկույթը մուգ

մոխրագույն բիտումային կղմինդրից է: Արտաքին դռները այլուհիս ջերմակամրջակով են՝ ներկված մուգ մոխրագույն գույնով: Արտաքին պատուհանագոգերը, հովհարը, քիվերը, դռների և պատուհանների շեպերը երեսապատել այլուկաբոնդով:

Կառույցի հիմքերն իրականացվելու են խաչահատվող հեծանների տեսքով: Հիմնային հեծանների բարձրությունը կազմում է 700մմ, իսկ լայնությունը՝ 800մմ: Հիմնային հեծանները իրականացվելու են B20 դասի ծանր  $g=2300\text{կգ/մ}^3$  ծավալային կշռով բետոնից: Հիմքերի նախապատրաստական շերտը իրականացվելու են 100մմ հաստությամբ B7,5 դասի բետոնից:

Սպորտդահլիճի ծածկը իրականացվելու է մետաղական ֆերմաների տեսքով հենված ե/բետոնե սյուների վրա: Ֆերման զուգահեռ գոտիներով է: Ֆերմայի վերին և ներքին գոտիներով իրականացված է հորիզոնական կապեր: Տանիքը կառուցվելու է փայտե ծալեղներով, որոնց ներքևի մասում ամրանում է փայտատաշեղային սալ, որի վրա տեղադրվում է բազալտե մանրաթելերով ջերմամեկուսիչ սալ:

Դպրոցի 1-:9 առանցքներում և մանկապարտեզի տանիքը իրականացված է փայտե կոնստրուկցիաներով: Ծալեղների վրա իրականացված է կավարամած, որի վրա ամրանում է փայտատաշեղային սալ: Այն հանդիսանում է փաթեթոցային տանիքի հիմք:

Դպրոցի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Շահագործման փուլում շենքն, ինչպես նաև ստորգետնյա հարկերն ապահովված են լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

Նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Համալիրնապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, ապահովվելու է համակցում 911 մոնիթորինգային համակարգին համապատասխան տեխնիկական և ընդհանուր դրույթներով:

Նախատեսվում է հարկերի միջանցքներում ծխահեռացում՝ տանիքում տեղադրվող օդամուղների միջոցով: Նախատեսվում է տեղադրել դիմահարման համակարգեր՝ հրդեհամարման նպատակով տեղադրել 70 հատ կրակմարիչներ: Տեղադրվելու են հակահրդեհային ազդասարքեր, վահանակներ:

Շենքերն ապահովված են լինելու էվակուացիոն ելքերով:

#### **Գազամատակարարում.** գազամատակարարում չի նախատեսվում:

**Ջերմամատակարարում.** ջեռուցումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով: Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի, մեկ հարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ: . Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ռադիատորներ, բացառությամբ սպորտսրահից որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ: Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ՝ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

Սենյակների ներսի օդի ջերմաստիճանները կարգավորվելու են օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով : Դպրոցում մատակարար խողովակը անցնում է ձեղնահարկով, իսկ հետադարձը՝ +0.100 նիշի հատակի միջով: Մանկապարտեզում, սպորտ. սրահում և հանդիսությունների դահլիճում մատակարար և հետադարձ խողովակները անցնում են հատակի միջով: Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

**Օդափոխություն.** Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով: Մեխանիկական ներածման և արտածման օդափոխությունը նախատեսված է նկուղային հարկից, ճաշարանից և քիմիայի կաբինետից,

հանդիսությունների դահլիճի համար և մարզադահլիճից: Մարզադահլիճի և հանդիսուփյունների դահլիճի համակարգերը աշխատում են պարբերաբար ըստ պահանջի:

Դասարանների և կաբինետների համար նախատեսված է ներածման-արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրված են դասասենյակի արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով: Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը: Աշխատող օդափոխիչներից բացառել աղմուկի տարածումը բացառելու նպատակով ներածման և արտածման օդատարների վրա, օդափոխիչից հետո նախատեսված են աղմկախլացուցիչներ :

Դպրոցի -3.30 նիշում օդի ներածումը և արտածումը նախատեսված է իրականացնել մեխանիկական դրդմամբ Ն1 Ա1 համակարգով, որի սարքը տեղադրված է ձեղնահարկում:

Սենյակներում ներածման և արտածման օդաքանակները հաշվված են համաձայն գործող նորմերի: Նախատեսված է նաև ինքնուրույն արտածման համակարգ մեխանիկական դրդմամբ՝ սան հանգույցներից կանալային օդափոխիչներով: Ներածման և արտածման օդատարների բոլոր ճյուղավորումների վրա նախատեսված են օդի կարգավորիչ փականներ ձեռքի կարգավորմամբ: Բոլոր օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից:

**Հակահրդեհային համակարգ.** Համակարգը բաղկացած է ընդունիչ հսկիչ սարքից: Պատի վրա տեղակայման բարձրությունը  $h=1500$ մմ: Վահանակին միացվում են հասցեային օպտիկական ազդասարքերը, հասցեային շարժման և մագնիսակոնտակտային ազդասարքերը, հասցեային հրդեհի՝ ձեռքով գործարկվող ազդասարքերը, հասցեային լուսաձայնային ազդարարիչները, հասցեային ինտերֆեյսային մոդուլը, հասցեային սարքը: Հրդեհի ահազանգման համակարգի ընդունիչ հսկիչ սարքը տեղակայվում է շինության առաջին հարկում /0,100 նիշ/ գտնվող պահակակետում, որտեղ իրականացվում է շուրջօրյա հերթապահություն: Ընդունիչ հսկիչ սարքը համալրված է ԱԻՆ միանալու բջջային կապով աշխատող ավտոմատ զանգահարող սարքով:

Շինությունում, բացառությամբ սանհանգույցների, թաց գործընթացով և 2 մ2 պակաս մակերեսով սենքերի, բոլոր տարածքներում նախատեսված են հասցեային ծխի ազդասարքեր, իսկ միջանցքներում, էվակուացիոն ելքերի և աստիճանավանդակների մոտ նախատեսված են հրդեհի հասցեային ձեռքի ազդարարիչներ / $h=1500$ մմ/: Մարզասրահում նախատեսված են ծխի գծային ազդասարքեր ռեֆլեկտորով, ազդասարքերը տեղակայվում են  $h=5400$ մմ բարձրության վրա պատի վրա, իսկ ռեֆլեկտորները  $h=7200$ մմ բարձրության վրա ազդասարքի դիմացի պատին:

Շինության ընդհանուր օգտագործման տարածքներում նախատեսված են լուսաձայնային

ազդարարիչներ՝ ահազանգի դեպքում լուսաձայնային ինդիկացիայի համար, տեղակայման բարձրությունը՝ h=2800մմ:

Շինության նկուղային հարկում նախատեսվում է հասցեային ռելեային մոդուլ՝տեղակայման բարձրությունը h=1600մմ, հրդեհի ահազանգի դեպքում վերելակի ղեկավարման, օդափոխության համակարգի ներածման սարքավորումները հրդեհի դեպքում ավտոմատ անջատելու, ծխահեռացման կափույրների ակտիվացման համար: Ռազմագիտության դասասենյակում և զենքի պահոցում նախատեսվում է դռների բացման հասցեային մագնիսական կոնտակտներ և շարման հայտնաբերման հասցեային ազդասարքեր՝ տեղակայման բարձրությունը՝ h=2300մմ:

Բոլոր հասցեային ազդասարքերի, ազդարարիչների և այլ հասցեային միավորների միացումը հասցեային օղակին կատարվում են КСРЭВНГ(А)-FRLS 2x0.50 այրում չտարածող մալուխներով, ապահովելով անխափան սնուցումը: Էլեկտրասարքավորման պահպանիչ հողանցումը պետք է իրականացվի ԷՍԿ-ի համաձայն:

**Էլեկտրամատակարարում.** կրթական համալիրի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն՝ էլեկտրացանցի կողմից տեխնիկական պայմանի: Ներկայացվել է դիմում տեխպայման ստանալու նպատակով:

Դպրոցի էլ.մատակարարումը իրականացվում է 400կՎԱ հզորությամբ 0.1.0 1՝ լրակազմ գոյություն ունեցող տրանսֆորմատորային ենթակայանից՝ երկու մալուխային գծով:

Բաշխիչ վահանից տարված են սնող գծեր դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով: Խմբային ցանցը նախատեսված է ԹԹժվ-LS մակնիշի մալուխով՝ ճկուն խողովակների մեջ: Անջատիչները և վարդակները դասասենյակներում տեղադրվում են հատակից 1.8մ բարձրության վրա,այլ սենյակներում՝ հատակից 0.8մ, վահանակները տեղադրվելու են 1.5մ բարձրության վրա՝ հատուկ պատրաստված խորշերի մեջ:

Բոլոր լուսատուների և վարդակների սնուցումը իրականացվելու է 3 հաղորդալարերով, նեոարյալ PE հաղորդալարը:

Հրդեհի դեպքում նախատեսված է օդափոխության ամբողջ համակարգի անջատում:

**Ջրամատակարարում, ջրահեռացում-** Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) համաձայն: Հաշվի առնելով, որ նոր դպրոցը կառուցվում է նախկին դպրոցի տարածքում, ջրամատակարարման և ջրահեռացման համար նոր տեխնիկական պայմանի ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում, պայմանները չեն փոխվում: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե

խողովակակտորներով: Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով: Դպրոցի տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերն որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվում է  $Q_{max}/վրկ=2.767$  վ/վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ 2.5վ/վրկ (2 շիթ): Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Կենցաղային կոյուղու համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով: Կեղտաջրերը ինքնահոս հեռանում են բակային ցանց, որը միանում է տարածքում տեղադրված կոյուղու մաքրման կայանին: Անձրևաջրերը կհավաքվեն ոռոգման համար նախատեսված 1 ջրի ռեզերվուարներում՝ 46մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, և կօգտագործվեն դպրոցի կանչապատ գոտիների ոռոգման համար:

**Հեղեղատար համակարգ. ճանապարհի եզրով անձրևաջրերի հետ ընդհանուր համակարգին ու հեռացվելու հարթ տանիքներից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանց, որը միանում է անձրևատար կոյուղու փողոցային հեղեղատարին:**

**Աղբահեռացում.** Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Թալին համայնքի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Տեղադրվելու են 6 հատ 1\*1,5 չափերի աղբամաններ, այդ թվում աղբի տեսակավորման աղբամաններ:

**Բարեկարգում և կանաչապատում.** Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքը սալիկապատվելու է մայթուղիներով և մեքենաների համար նախատեսվող ասֆալտապատ ճանապարհներով, բացօթյա ավտոկայանատեղիներով: Տարածքում նախատեսված է 4.0 x 8.0մ ջերմոց, 26x14մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք:

Տարածքում նախատեսվում է նաև փոքրիկ ջերմոց, որի նպատակը երեխաներին ջերմոցային տնտեսությանը ծանոթացնելը և հողային աշխատանքներում ներգրավվելն է: Այն ենթադրում է իրենից 32մ<sup>2</sup> տարածք, որտեղ տեղադրվելու է ժամանակավոր մետաղական կոնստրուկցիա՝ պոլիթիլենային ծածկով՝ ուսուցողական նպատակով:

**Ցանկապատում.** Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:

**Կանաչապատում.** շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 6602.70մ<sup>2</sup> մակերեսով: Կանաչապատումը կատարվելու է Թալինի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

**6.2 Շինարարության փուլ.** դպրոցի շենքի կառուցումը կատարվելու է երկու փուլով.

- Առաջին՝ նախապատրաստական աշխատանքներ
- Երկրորդ՝ կառուցապատում:

**6.2.1Քանդման փուլ:** Կատարվելու են քանդման աշխատանքներ: Քանդման աշխատանքները կատարվելու են մեխանիզմներով, բահերով՝ առանց պայթեցման: Քանդվելու են հետևյալ շինությունները.

- Դպրոց՝ 2056.42մ<sup>2</sup>
- Կաթսայատուն՝ 72մ<sup>2</sup> և 16.56մ<sup>2</sup>
- Անավարտ շինություններ՝ 636.9մ<sup>2</sup> և 580.7մ<sup>2</sup>

Քանդման արդյունքում առաջացած շինադրի ծավալը և թափոնների տեսակային կազմը որոշվելու է Կապալառու կազմակերպության կողմից՝ շինարարության փուլում: Շենքի ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլ առ փուլ: Սկզբում կիրականացվեն դպրոցի շենքի տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամոնտաժումը, քանի որ նշված հումքը ենթակա է կրկնակի օգտագործման, որից հետո կիրականացվեն սկզբում երկրորդ հարկի ծածկի ապամոնտաժումը, իսկ այնուհետև՝ կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Այնուհետև նույն հաջորդականությամբ կիրականացվի առաջին հարկի ապամոնտաժումը: Ծածկերի և միջհարկային սալերի ապամոնտաժումը կիրականցնի զոդման միջոցով, որից հետո անջատված սալերը և սյուները ճոպանների միջոցով կմիացվեն թրթուռավոր կռունկին և դանդաղ կտեղափոխվեն հրապարակի ազատ տարածություն: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինանյութեր, կտեղապոխվեն կապալառուի բազա և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից՝ այլ շինարարական աշխատանքներում: Երկրորդային օգտագործման համար պիտանի հումքի ծավալները չեն ներկայացվում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 87-Ա (06.02.2019) որոշումը առ այն, որ վերջիններս անհատույց սեփականության իրավունքով տրամադրվելու են դպրոցի շինարարության մրցությամբ կարգով ընտրված շինարար կապալառուին:

## 6.2.2.Ժամանակացույց



Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է ըստ գործող ՀՀՇՆ 1-3.01.-2008 նորմերի:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 2 տարի՝ 24 ամիս:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է՝

- հողային աշխատանքներ՝ հանույթ, լիցք
- շինարարական հրապարակի կազմակերպում,
- շին-մոնտաժային աշխատանքների իրականացում
- շին-մոնտաժային մեխանիզմների. ամբարձիչ- տրանսպորտային միջոցների և
- հիմքերի իրականացում, ստորգետնյա հարկերի, հորաների կառուցում,
- ե/բ սալիաշխատանքներ, պատերի շարվածքներ,
- ենթակառուցվածքների անցկացում,
- հարդարման աշխատանքների իրականացում և այլն:



**6.2.3** շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակը կազմում է 800մ<sup>2</sup> մակերես:

Շինհրապարակում տեղակայվելու են .

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների
- տեղակայման վայրեր,
- բետոնի ընդունման հարթակ,
- շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, բացօթյա պահեստ,
- աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ, տարբեր նշանակության շարժական տնակներ, հանդերձարան-չորանոցով՝ 1 հատ, 1 հատ սննդի ընդունման կետ՝ ճաշարան,վաճարան, ցնցուղարան, բուժկետ,
- ջրամատակարարման պոմպ՝ մեքենաների անիվների վաճման համար,
- բիոզուգարան վաճարանով՝ 2 հատ
- ժամանակավոր սեպտիկ հոր՝ կեղտաջրերի հեռացման համար,
- կենցաղային աղբաման -2 հատ,
- շինարարական նյութերի լաբորատորիա՝ բետոնի բաղադրությունը ստուգելու նպատակով,
- շինհրապարակում լինելու են նաև 1 հատ 7x3 մ չափերի ավտոմեքենաների անիվների վաճման հարթակ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ	
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆ	ԱՎԱՆՈՒՄ
	ԷՍՎԿԱՍՏՈՐ
	ԲԵՏՈՆԵ ԽԱՌՆԻՉ
	ԱՎՏՈՒՄԱՐԱԽԱՅԻՆ ԿՈՒՌԿԿ
	ԱՎՏՈՒԼԵՆԱԹՔ
	ՇՎԱՔԱՐԱՆ
	ՍԱՆՉԱՆՈՒԹՅՆԵՐ
	ԲԱՑ ՊԱՅԵՍՆԵՐ
	ՓԱԿ ՊԱՅԵՍՆԵՐ
	ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԻՍԿ
	ՀՊՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՐՄԱՆ
	ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲԱՐՁՐԱՎՈՐՆ ԳՈՍՏԷ
	ԿՈՒՐԿԿԻ ԱՇԽԱՏԱՆ ԿՏԱՆԱԿՎՈՐ ԳՈՏԻ
	ԱՎՏՈՎՈՐՈՒԿԻ ՍԱՄԵԻ ՇԱՐՄԱՆ ՈՐԴՈՒԹՅՈՒՆ
	ԱՎՏՈՎՈՐՈՒԿԻ ՇԱՐՄԱՆ ՀԵՏԱԳԻԾ
	ՀԱՆԿԱՐԵԶԱՅԻՆ ՀԻՊՐՈՒՄՆ
	ՍԵՔԵՆԱՄԵԽԱՆԻՉՆԵՐԻ ՇԱՐՄԱՆ ՈՐԴՈՒԹՅՈՒՆ
	ԱՇԽԱՏԱԿՑՆԵՐԻ ՇԱՐՄԱՆ ՈՐԴՈՒԹՅՈՒՆ
	ԿՈՒՐԿԿԻ ԱՇԽԱՏԱՆ ԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԼՇԱՆ
	ԼՈՒՍԱՐՁԱԳ
	ԲԵՆՆԵՐԻ ԱՐՈՒՑՄԱՆ ՍԵՏՄԱՆԵՐԻ ԴԻՐՈՒՄԵՆՈՒՄ
	ԲԵՏՈՆԵ ՇԱՐՄԱԻ ԸՆԴՈՒԲԱՆԱՆ ՏԱՐՄՁԷ
	ԲԵՆՆԱԹՔՈՒՄՆ ԸՆԴՈՒՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՅԵՍԱՅԻՆ ՏԱՐՄՁԷ
	ՍԱԳՄԱՆՔՄԱԿԱՆ ԳՈՏԻ ԲԵՆԻ ԲԱՐՁ. ՀԱՄԱՐ 4-6 Մ ՀՊՐԻ ՄԱԿԵՐԵՍ

1. ԱՆԽԱԳԾԿՈՂ ԴԻՐՈՑ
2. ՄԴՈՐՏԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿ
3. ԱՐԵՎԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՍԱՐՄՁԷ
4. ԼՐԱԿԱԶՄ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ
5. ԶԵՐՄՈՑ
6. ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ
7. ՄԱՔՐՎԱԾ ԶՐԻ ՈՇԶԵՐԿՈՒՄ
8. ԱՎՏՈՎԱՅՄԱՆՏԵՂԻ
9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԿ
10. ԵԼՔ ՊԱՏՄՊԱՐԱՆՈՑ
11. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ
12. ՏԱՎԱՐՆԵՐ
13. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԻՐՈՑ

ՊԱՇՏՈՒ	ԱՆՈՒՆ, ԱՅԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Չառինգ բնակավայր, 2-րդ փողոց, 3-րդ դպրոց			
ՆՊՏ	Ա. ՆԱԶԱՐՅԱՆ		ԸԳ ՄԱՍ	ՓՈՒՆ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՆԱԽԱԳԾԵՑ	Ս. ԲԱՐՎԱՆԱՅԱՆ			ԱՆ	ԸՊՁ	14
			ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ			

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք, կենցաղային աղբի համար տեղադրվելու են 1\*1,5 չափերի 2 հատ մետաղական աղբամաններ:

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 1 հատ անիվների լվացման հարթակ՝ յուրաքանչյուրը 7x3մ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող կեղտաջրերի հեռացման համար նախատեսված բիոզուգարան :

Շինհրապարակը ցանկապատվելու է մետաղական 1075.475 մ երկարության ժամանակավոր պարսպով՝ դարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ՝ Կառուցապատողի, Գլխավոր կապալառուի, Պատասխանատու անձի հեռախոսահամարներով, շինթույլտվության համարով, շինարարության ժամկետների նշագրմամբ:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Նախատեսվող աշխատողների առավելագույն քանակը շինհրապարակում կազմելու է 25, որից ճարտարագիտա-տեխնիկական անձնակազմ՝ 6 մարդ, բանվորներ՝ 19 մարդ:

**Հողային աշխատանքներ.** կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 6000մ<sup>3</sup>, որից 2250մ<sup>3</sup> հետ լիցք: Մնացած՝ 3750մ<sup>3</sup> ծավալի հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է 15կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ համաձայն Թալինի համայնքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի

պահանջներին համապատասխան:

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ.** գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ տեխնիկական միջոցները՝

- Աշտարակային կռունկ KB - 403 A
- Ավտովերամբարձ կռունկ **КС - 65713-1 <<Галичанин>>**, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ **СБ-69Б**
- Բեռնատար ինքնաթափ **МАЗ 5550**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Շարժական կոմպրեսոր **ЗИФ - 55 В**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էլ.եռակցման սարք **СТН 500**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Բուրգեր **КОМАТСУ D37-EX-22**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էքսկավատոր **Hyundai 170W**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80\* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50 -ից ոչ ավել թեքություն:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես և առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին, կամ կախվում են տեսանելի տեղում ամբարձիչի մոտակայքում:

Ամբարձիչի պատվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի մինիմալ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է մանրախճի փռում կամ բետոնասալերի տեղադրում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի

պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

**Էլեկտրամատակարարում.** կրթական համալիրի շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

**Հրդեհաշիջման համակարգ.** շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է 4 հրդեհաշիջման վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով և հիդրատներով: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 3 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

**Աղբահեռացում.** շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 3100մ<sup>3</sup> ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Առաջանալեու է նաև երկրորդային օգտագործման ենթակա շինարարական մասեր, նյութեր, որոնք կապալառու կազմակերպությունն օգտագործելու է այլ շինարարության ժամանակ:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 3000կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5\*1 չափերի 2 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կատարվելու է Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

## 7. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

**7.1 Ջուր.** շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների խմելու ջրի համար կառուցվելու է ժամանակավոր ջրագիծ: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 3 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Տեխնիկական ջրի մատակարարման աղբյուրը կճշտվի համապատասխան թույլտվություններ ստանալուց հետո, շինարարական աշխատանքների սկզբից՝ կապալառու կազմակերպության կողմից: տեխնիկական ջրի մատակարարումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակում ջուրն օգտագործվում է կենցաղային և հրդեհաշիջման նպատակներով: Որի սպառման հաշվարկման մեթոդը հիմնված է ըստ СНиП 3.01.01-85.

Ընդհանուր գնահատված ջրի սպառում.

$Q_{\text{сум}}$  որոշվում է բանաձևով:

$$Q_{\text{сум}} = Q_1 + Q_2 + Q_3, \text{ որտեղ՝}$$

$Q_1$  - ջրի սպառումը արտադրական կարիքների համար;

$Q_2$  - ջրի սպառումը տնտեսական կարիքների համար;

$Q_3$  - հրդեհաշիջման համար ջրի սպառում;

• **Արտադրության կարիքների համար ջրի սպառման հաշվարկ**

$$Q_1 = 1,2 \times K_{\text{н}} \times \sum \frac{Q_{\text{ср}}}{8 \times 3600}, \text{ л/վ}$$

որտեղ 1,2 – չհաշվառված ջրի սպառման գործակից,

$Q_{\text{ср}}$  – միջին արտադրության ջրի սպառում մեկ հերթափոխով,

$K_{\text{н}}$  – ջրի անհավասար սպառման գործակիցը հավասար է 1.6-ի,

8 – հերթափոխի ժամերի քանակը:

*Շինարարության ջրի պահանջները մեկ*

*հերթափոխով*

Սպառող	Մոտավոր սպառում ջուրը ըստ СНиП	Մեկ հերթափոխի ջրի գնահատված սպառումը, л
Բետոնի և երկաթ բետոնի ցայտումը	200 - 400 л/խմ (մեկ օր)	1000



$$Q_1 = 1,2 \times 1,6 \times \frac{1000}{8 \times 3600} = 0,07 \text{ Լ/վ}$$

• **Կենցաղային կարիքների համար ջրի սպառման հաշվարկ**

Աշխատանքի ընթացքում աշխատողների և աշխատողների ջրի ապահովման հետ: Կենցաղային կարիքների համար ջրի սպառումը որոշվում է բանաձևով.

$$Q_2 = \frac{q_2 \times n_2 \times K_2}{t_1 \times 3600},$$

որտեղ  $n_2$  - ամենաբեռնված հերթափոխով աշխատող մարդկանց թիվը, հավասար է 25 մարդու;

$t_1$  - հերթափոխի տևողությունը, հավասար է 8 ժամվա;

$K_2$  - ջրի սպառման ժամային անհավասարության գործակից (հավասար է 1,5 - 3):

Աշխատանքի հատուկ պայմանների համար մենք ընդունում ենք  $K_2 = 1,50$ ;

$q_2$  - կենցաղային և խմելու կարիքների համար ջրի հատուկ սպառում, որը հավասար է  $q_2 = 25 \text{ Լ / օր}$ :

Ստանում ենք.

$$Q_2 = \frac{25 \times 25 \times 1.50}{8 \times 3600} = 0.03 \text{ Լ/վ}$$

Շենքի հրդեհը մարելու համար ջրի սպառումը  $q_3 = 2.5 \text{ Լ / վ}$  է ներքին հրդեհային հիդրանտի՝ յուրաքանչյուր ռեակտիվից:

Հրդեհի մարման համար օգտագործվող ներքին հրդեհային հիդրանտների քանակը  $n = 2$ :

Շենքի հրդեհը մարելու համար ջրի սպառումն է.

$$Q_3 = n \times q_3 = 2 \times 2.5 = 5.00 \text{ Լ / վ}:$$

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ՝}$$

$S1$  – ջրվող տարածքի մակերեսը  $2200 \text{ մ}^2$ , (արդիրապարակ, ճանապարհներ)

$K1$  –  $1 \text{ մ}^2$  օրական ջրցանի նորմը,  $0.0015 \text{ մ}^3$ ,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 200 (առավելագույնը 200օր, ներառված կրկնակի ջրցանը)

$$U1 = 2200 \times 0.0015 \times 200 = 660 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.01 \text{ մ}^3/\text{օր}/0,096 \text{ Լ/վ}:$$

**Ընդհանուր սպառում՝ շինհրապարակի կարիքները բավարարելու համար.**

$$Q_{\text{tot}} = Q_1 + Q_2 + Q_3 + U1 = 0,07 + 0,04 + 5,00 + 0,96 = 6.07 \text{ Լ / վ}:$$

**Կեղտաջրեր.** Աշխատողների համար նախատեսվում է տեղադրել բիոզուգարան՝ վլացարանով: Իսկ ավտոբետոնախառնիչի տակարի, ավտոբետոնամղիչի խողովակի վլացման հոսքաջրերն ուղղորդվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան:

Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

**Շահագործման փուլ.** Ջարինջա բնակավայրում բացակայում է կոյուղատարը, ուստի դպրոցի ջրահեռացման համակարգի համար նախատեսվում է տեղադրել 1 բլոկային համակարգով, ընդհանուր 2290 կգ քաշով, 13մ երկարությամբ, 2,2մ լայնությամբ և 14մ բարձրությամբ Եվրոլոս-250 տիպի կամ նույն տեխնիկական լուծումներին բավարարող այլ մակնիշի երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 3,6մ<sup>3</sup> ժամում ծավալով( Q= 86.4մ<sup>3</sup>/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%: Մարման կայանի հզորությունը բավարարելու է աշակերտների և աշխատողների սպասարկման համար:

**Շահագործման փուլում** հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Հրդեհամարման համար նախատեսվող ջրաքանակը հաշվարկվում է 0,12լ/վրկ 1մ<sup>2</sup> մակերեսի համար:

**7.2 Նյութեր.** Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- ավազ, բետոն
- ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային սալեր,
- բիտումային կղմինդր
- տուֆ
- մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ
- ապակի , փայտ
- բարձրորակ ներկ և այլն

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե և ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային սալերով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնացման համար

համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Նախատեսվում է օգտագործել B20 դասի ծանր  $g=2300$ կգ/մ<sup>3</sup> ծավալային կշռով բետոն:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Բետոնի որակը ստուգվելու է շինհրապարակում նախատեսված լաբորատորիայում:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շինարարական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

## **8. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման, փակման փուլ)**

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Արագածոտնի մարզ Թալին համայնքի Զարինա բնակավայրի վարչական տարածքում 2-րդ փողոց, թիվ 3 դպրոց հասցեում: Տարածքը գտնվում է նախկին դպրոցի տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխազագերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, ինչպես նաև աշխատանքի անվտանգության հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Գործունեության իրականացումը չի առաջացնելու է լանդշաֆտի ծանրաբեռնվածություն, քանի որ կառուցապատումը կատարվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու՝ բացառությամբ հիվանդ ծառերի:

Կրթական համալիրի կառուցումը կատարվելու է << գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան:

### **8.1 Օդային ավազան.**

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապահների փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ՝ օդի աղտոտվածությունը վերահսկելու նպատակով:

Շինարարության ժամանակ հանվելու է հողային գրունտ:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցներ՝ թվով 12 շինմեքենա/շինտեխնիկա:

### **Մթնոլորտ արտանտվող նյութերի հաշվարկ**

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 * M_{\text{վրկ}} * (365 - (T_{\text{ց}} + T_{\text{ձ}})), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

$C_1$  – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը

$C_2$  - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

$C_3$  - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

$K_5$  - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

$N$  - ամբողջ տրանսպորտի վազքը ընթացների թիվն է ժամում

$L$  - մի վազքի միջին երկարությունն է

$C_7$  - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանտվող փոշու բաժնեմասը

$q_1$  - 1 կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

- C<sub>4</sub> - գործակից, որը հաշվի է առնում պլաստֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը
- C<sub>5</sub> - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը
- K<sub>5</sub> - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը
- q<sub>1</sub><sup>2</sup> - նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները
- S - պլաստֆորմայի միջին մակերեսն է ,
- n - ավտոմեքենաների թիվն է
- T<sub>ср</sub> – ձնածածկ օրերի թիվն է
- T<sub>д</sub> – անձրևային օրերի թիվն է

Աղյուսակ 2.

Կատարվող աշխատանքի բնույթը	C1	C2	C3	N	L	C7	q1	C4	C5	K5	q12	S	n	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	15	13	0,037	0.005
Գրունտի հանույթը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	7	1	0,0013	0,00018
Գրունտի հետլիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	7	1	0,0013	0,00018

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 3-ում

Աղյուսակ 3.

Աշխատանքի բնույթը	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO <sub>2</sub> )	0,037	0.005
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO <sub>2</sub> )	0,0013	0,00018
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO <sub>2</sub> )	0,0013	0,00018
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0,0396	0,00536

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO<sub>2</sub> պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1մ<sup>3</sup> աշխատանքային շերտի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times P_6 \times B_1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P<sub>1</sub> - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04

P<sub>2</sub> 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P<sub>3</sub> - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2

- P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01
- P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5
- P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0
- B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5
- G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերտի տարողության՝ 9տ/ժ

Այսպիսով,

$$Q = \frac{0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 4,5 \times 10^6}{3600} = 0,003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO<sub>2</sub>).

$$M = 0,0036 \times 0,003 \times 72 = 0,00078 \text{ տ/շինժամ}$$

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times K_8 \times K_9 \times B \times G \times 10^6}{3600} \cdot (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,

K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,

K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,

K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,

K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,

K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից

K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,

G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ

η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով

**Արդաներվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.**

$$M_{\text{տ}} = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot K_9 \cdot B \cdot G_{\text{տ}}, \text{ տ/տ}$$

Դե  $G_{\text{տ}}$  – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Գրունտ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945 \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տ}} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման –բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 4.

Արտանետվող նյութ	Առավելագույն միանվագ, գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Անօրգանական փոշի >70%	0,000945	0,0076
Անօրգանական փոշի 20-70%	0,003	0,0106

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600}$$

Որտեղ,  $G_4$  – դիզ. վառելիքի ժամային ծախսն է  
 $q_i$  – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ  
 $n$  – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:  
 Հետևաբար,

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600} = \frac{0,026 \cdot 0,084 \cdot 3 \cdot 10^3}{3600} = 0,0018 \text{ մ}^3 \text{ գազային արտանետման ծավալն է:}$$

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_i = \sum_{k=1}^k (m_{\text{ՄԹԱ}i} \cdot t_{\text{ՄԹԱ}i} + 1,3 \cdot m_{\text{ՄԹԱ}ik} \cdot t_{\text{ՄԹԱ}ik}) \cdot N_k / 1800, \text{ ր/ց}$$

որտեղ  $m_{\text{ՄԹԱ}i}$  – i-րդ նյութի սահմանային արտանետումն է չճանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{\text{ՄԹԱ}ik}$  – i-րդ նյութի սահմանային արտանետումն է ճանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{U\theta u}$  – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝  
չճանրաբեռնված ր.

$t_{U\theta uk}$  – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝  
ճանրաբեռնված ր.

$N_k$  – k-րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների  
առավելագույն թիվն է

i-րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է  
հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^k (m_{U\theta ui} \cdot t_{U\theta u} + 1,3 \cdot m_{U\theta uk} \cdot t_{U\theta uk}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$



Շինմեքենաների անվանացանկ	Քանակը	Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը							Աշխատանքային օրերի թիվը	Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը
		Օր/ժ			30ր/ր					
		ընդամենը	չծանրաբեռնված	ծանրաբեռնած	Ազատ ընթացք	չծանրաբեռնված	ծանրաբեռնած	Ազատ ընթացք		
Աշտարակային կոունկ	1 (1)	1	0,433	0,5	0,333	12	13	5	95	+
Ավտովերամբարձ կոունկ	1 (1)	1	0,433	0,5	0,333	12	13	5	95	+
Բեռնատար ինքնաթափ	1 (3)	3	2,4	2,6	1	12	13	5	320	-
Բեռնատար ավտոբետոնախառնիչ	1 (1)	2	2,4	2,8	1	12	13	5	320	+
Էքսկավատոր	1 (1)	4	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
բուլդոզեր	1 (1)	3	1,2333	1,6	0,6667	13	13	5	250	-
կոմպրեսոր	1 (1)	1	0,2333	0,4	0,16667	13	12	5	110	-

ջրի մեքենա	1 (2)	2	2	2,16667	0,8333 3	12	13	5	90	+
------------	-------	---	---	---------	-------------	----	----	---	----	---

Աղտոտող նյութի անվանումը	i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է համաձայն $G_i = \sum_{k=1}^k (m_{\text{սթու}} \cdot t_{\text{սթու}} + 1,3 \cdot m_{\text{սթու}} \cdot t_{\text{սթու}}) \cdot N_k / 1800,$ <p>բանաձևի, իսկ ընդհանուր գ/վրկ</p>
Ածխածնի օքսիդ	0,00362
Ածխաջրածիններ	0,003214
Ազոտի օքսիդներ	0,00409
Ծծմբի երկօքսիդ	0,00204
Մուր	0,00278

Աղյուսակ 5.

Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանչյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկայնյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\Pi = 10^{-3} \cdot m_k \cdot (\delta a / 100) \cdot (1 - f_p / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

$m_k$  – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

$\delta a$  – ներկի բաժնեմասն է, որը կորում է աէրոզոլի տեսքով, %;

$f_p$  –լուծիչ, %;

$K$  – աէրոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$$\Pi_i = 10^{-3} \cdot m_k \cdot f_p \cdot \delta' p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

$f_p$  – նյութի օքսիդացման չափաբաժինն է

$\delta' p$  – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակցման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Pi' \cdot 10^6$$

$$G = \text{-----}, \text{ գ/վրկ}$$

$$n \cdot t \cdot 3600$$

որտեղ,

$\Pi'$  - ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

$n$  – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

$t$  – օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1-45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,0015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները

ներկայացվում են Աղյուսակ 7-ում

Աղյուսակ 7.

Աղտոտող նյութի անվանումը	Առավելագույն արտանետում գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ	0,001128	0,004511
Կախյալ մասնիկներ	0,0015316	0,002256

**Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 8-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը**

**Աղյուսակ 8.**

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ	Ժամանակահատված)							
	Անօրգանական փոշի 70-20% SiO2	Անօրգանական փոշի > 70 SiO2	Ածխածնի օքսիդ	Ածխաջրածիններ (CH)	Ազոտի օքսիդներ	Ծծմբի երկօքսիդ	Մուր	Դմբիլբենզոլ	սխյալ մասնիկներ
1	2	3	4	5			6		
Շինտեխնիկայի տեղեշարժ՝ այդ թվում նաև շինաղբի տեղափոխում	0,0396	-	-	-	-	-	-		
Փորման աշխատանքներ	0,003	-	-	-	-	-	-		
Բեռնման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի վերակառուցման աշխատանքներ	-	0,000945	-	-	-	-	-		
Դիզելային շարժիչից առաջացող արտանետումներ	-	-	0,00362	0,003214	0,00409	0,00204	0,00278		
Ամրակցման աշխատանքներից արտանետումներ	-	-	-	-	-	-	-	001128	0015316



Կառուցապատման ժամանակ արտանետվող նյութերը գտնվում են թույլատրելի սահմանային նորերում, իսկ շինարարությունը կրելու է ժամանակավոր բնույթ, ուստի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նույնպես:

### **8.2 Հողային ռեսուրսներ.**

Գործունեության ենթակա տարածքի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ»ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներատեխնիկական եզրակացության՝ հողածածկի առաջին շերտը Տուֆ է՝ կարմիր. վարդագույն երանգի, պինդ, հոծ: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Բացակայում է բուսահողը:

Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 6000մ<sup>3</sup> ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Ավելացած հողային զանգվածը տեղափոխվելու է աղբավայր՝ Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

### **8.3 Ջրային ռեսուրսներ.**

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ»ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներատեխնիկական եզրակացության՝ Տեղամասում մինչև 10մ խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 10 մետրից խորը հորիզոններում:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Մոտակա արհեստական ջրամբարը գտնվում է 210մ հեռավորության վրա: Բացի այդ շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ, բացառելով մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցությունը:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չկա, քանի որ կից գտնվող ջրային ռեսուրսները բացակայում են:

**Շահագործման փուլում** դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է բնակավայրի ջրատարին:



Լորուտ բնկավայրում բացակայում է կոյուղատարը, ուստի դպրոցի ջրահեռացման համակարգի համար նախատեսվում է տեղադրել մաքրման կայան: Շահագործման փուլում նախատեսվում է տարածքում տեղադրել 1 բլոկային համակարգով, ընդհանուր 2290 կգ քաշով, 13մ երկարությամբ, 2,2մ լայնությամբ և 14մ բարձրությամբ Եվրոլու-250 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 3,6մ3 ժամում ծավալով ( Q= 86.4մ3/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:

Կեղտաջրերը բակային Ներքին ցանցով հավաքվում են և պոմպակայանով տրվում մաքրման կայան: Ներքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից  $\Phi 50;40;32;25;20$ մմ: Արտաքին ցանցը մոնտաժվում է  $\Phi 50$ մմ պոլիէթիլենային խողովակներից:

Մաքրման կայանում հավաքված ջուրը օգտագործվելու է կանաչ տարածքների ոռոգման համար:

#### **8.4 Կենսաբազմազանություն**

**Բուսական աշխարհ.** նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, երկար տարիներ օգտագործվել է որպես դպրոցի տարածք: Տարածքում բացակայում են ծառերը:

**Կենդանական աշխարհ.** գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է արդեն կառուցապատված տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում: Հաշվետվությունում նախատեսվում են Բնապահպանական միջոցառումներ ուղղված ծառերի տեսքով քաղաքային կենսաբազմազանության՝ բուսատեսակների պահպանմանը:

#### **8.5 Թափոններ.**

Քանդման արդյունքում առաջանալու են տարատեսակ թափոններ՝ դոներ, պատուհաններ, քար, թիթեղ, փայտ, մետաղական մասեր և այլն: Այս թափոնները տեսակավորվելու են, կուտակվելու են շինհրապարակի առանձին հատվածներում և հանձնվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին, պահանջարկի դեպքում նաև բնակիչներին: Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601

01 00 4)՝ 7476,90մ<sup>3</sup> ծավալով՝ ներառյալ քանդման ժամանակ առաջացած շինադբը:

- կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 5400 կգ/տարի, շահագործման փուլում՝ 14400 կգ/տարի:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 3750 մ3:

Շինարարության փուլում առաջանալու են նաև այլ թափոններ, մասնավորապես՝

- յուղոտված լաթեր(58200600 01 01 4),
- յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից ցածր՝ 31402303 01 03 4),
- շինարարական նյութերի, փայտանյութի թափոններ, այդ թվում շինությունների քանդելուց և մասնատելուց առաջացած (17120500 01 00 4),
- կտորների տեսքով ասբեստի թափոններ (ծակագիր՝ 31403702 01 01 4), Ասբոցեմենտի իրերի ջարդոն /թիթեղ, խողովակ(ծակագիր՝ 31401203 13 014 և այլն:
- ներկեր, կարծրավցած սոսինձ(55700600 01 01 4),
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ /առաջանում է շենքի հիմնակմախքի, կաթսայատան քանդման արդյունքում՝ ծածկագիր՝ 35131200 01 99 5), օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար տարբեր պարունակության՝ (ծածկագիր՝ 3531030501013), օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5) և այլն:

Քանդման արդյունքում առաջացող թափոնների, ինչպես նաև նշված թափոնների քանակական գնահատումը կկատարվի Կապալառու կազմակերպության կողմից շինարարության փուլում, ելնելով փաստացի արդյունքներից:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 և 5-րդ դասերին:

Համաձայն Թափնի համայքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության՝ թափոնները տեղափոխվելու են 5կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր:

## Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով .

$$M=n*m$$

$m$  – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

$n$  – աշխատողների թիվն է .

$$M=25*120= 3000\text{կգ/տ կամ } 9.2\text{կգ/օր}$$

Շինարարությունը տևելու է 2 տարի, հետևաբար

$$M=3000*2= 6000\text{կգ/տ}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով կրթահամալիրի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 200 աշակերտ, 40 երեխա և 60 աշխատող, ընդամենը 300մարդ: Շահագործման փուլում կենցաղային աղբի քանակը կկազմի .

$$M=300*120= 36000\text{կգ/տարի կամ } 112\text{կգ/օր:}$$

Թափոնների կառավարման համար հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### 8.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ .

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Զարինջա գյուղում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ, ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում: Գործունեությունն իրականացվելու են գոյություն ունեցող դպրոցի տարածքում, ուստի առանձին ուսումնասիրության աշխատանքներ չեն նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

### 8.7 Աղմուկ և թրթռում .

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ

Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱՃՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹԿԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր: Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլղոնը: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլղոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի կյուլթի խտությունը՝  $\leq 200$  կգ/մ<sup>2</sup>: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշտպանման Էկրան:

Պաշտպանիչ Էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$$L_{աղ} = 23 \lg mE - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$L_{աղ} = 13 \lg mE - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ  $m = Km$  – մակերեսի խտության Էկվիվալենտն է,

$m$  – մակերեսի խտությունն է, կգ/մ<sup>2</sup>,

$K$  –գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը  $200$  կգ/մ<sup>2</sup>  $K=1,3$

$$M = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg mE - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հաղիսանում են որպես պաշտպանիչ Էկրան: Ձայնամեկուսացումը RԱտր ըստ աղուսյակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

Գլղոնի համար՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

### **Թրթռում**

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թուլյատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ <sup>2</sup> .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:  
Դպրոցների սենյերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում այլքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

### 8.8 Արտակարգ իրավիճակներ.

Համաձայն Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ»ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներատեխնիկական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոտեխնիկական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների, բարենպաստ է կառուցապատման համար: Ֆիզիկատեխնիկական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- բնական աղետների,
- սողանքների, հրդեհների,
- հեղուկ նյութերի արտահոսքի
- շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Գործունեության ընթացքում պարտադիր է. կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափուսի գնում իրականացումը և եզրակացության տրամադրումը:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների ռիսկը կապված է համալիրում հրդեհների, բնական աղետների առաջացման հետ:

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### **8.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն .**

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Հնարավոր ազդեցություններից խուսափելու համար շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-480\* նորմերի:

Շահագործման փուլում մարդկանց առողջության վրա բացասական ազդեցություն չի ունենալու, այլ միայն դրական ազդեցություն, քանի որ նպաստելու է երեխաների ավելի անվտանգ պայմաններում սովորելուն:

### **8.10 Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն .**

Կրթական համալիրի նախագծային լուծումները կատարել հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

Էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված

Էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է՝ Էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ:

Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության փորձաքննության փուլում (ծանուցման փաթեթ) էներգաարդյունավետության սերտիֆիկատի ներկայացման պահանջը պարտադիր չէ:

Նոր կառուցվող շենքի և դրանց պատող կոնստրուկցիաները նախատեսվում է կառուցել ըստ նշված կանոնակարգի(N 426-Ն որոշում) IV գլխի պահանջների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

Դպրոցի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովման նպատակով շենքերը կկառուցվեն.

- շենքի արտաքին պատերը երեսապատվելու են ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ սալերով, գործարանային ներկածածկույթով պահպանելով հրակայուն, ոչ ջրաթափանց և հողմաջրապաշտպան, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,

- շենքերի միջտարածքային ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,

- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:

**Արևային վահանակների տեղադրում:** Նախագծով նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր կառուցվող շինության տանիքին: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Տանիքին ՖՎ վահանակները տեղակայվում են այլումինե կրող հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: ՖՎ կրող հենակառուցվածքի



բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված այլումինից են: Փոխակերպիչները ՇՄԱԳ հաշվետվություն 22 փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն մալուխով շենքի մուտքային բաշխիչ վահանին էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները իջեցվում են շենքի հորանների միջով՝ ծալքախողովակի մեջ և միանում է շենքի էներգետիկական սենյակում գտնվող փոխակերպիչներին: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: ՖՎՀ-ն միացվելու է դպրոցի գոյություն ունեցող հողանցման ցանցին:

- Բացառվելու է վնասված վահանակների կուտակումը համալիրի տարածքում, տանիքում, բաց տարածքներում՝ աղբավայրերում:

### **8.11 Սոցիալական հարցեր .**

Կրթական համալիրի շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Նախատեսվող աշխատողների առավելագույն քանակը շինհրապարում կազմելու է 25, որից ճարտարագիտա-տեխնիկական անձնակազմ՝ 7 մարդ, բանվորներ՝ 18 մարդ:

Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

Շահագործման փուլում դպրոցի ծանրաբեռնվածությունը կազմելու է 300 մարդ՝ 200 աշակերտ, 40 երեխա, ուսուցիչներ՝ 60, աշխատողներ՝ 55, վարչական՝ 3, բանվոր՝ 2:

Կրթահամալիրի կառուցումը կնպաստի երեխաների ավելի անվտանգ և բարենպաստ միջավայրում սովորելուն, կնպաստի բնակավայրի սոցիալական վիճակի բարելավմանը:

### **8.12 Լանդշաֆտ .**

Գործունեության իրականացումը չի առաջացնելու է լանդշաֆտի ծանրաբեռնվածություն, քանի որ կառուցապատումը կատարվելու է նախկին դպրոցի

տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

### **8.13 Բարեկարգում և Կանաչապատում.**

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 6602.70մ<sup>2</sup> մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ներբակային գոտում, հարակից տարածքներում և ճանապարհի եզրերին: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով համաձայն՝ թափինի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի: Տնկվելու են.բարդի՝ 25 հատ, տույա՝ 33 հատ, կովկասյան եղևնի՝ 24 հատ, կեչի՝ 22 հատ, գնդաձև ակացիա՝ 5 հատ, ասպիրակ՝ 17 հատ, ֆորզիցիա՝ 25 հատ: Մնացած ազատ հատվածներում կատարվելու է զազոնապատում:

Կանաչապատման նախագիծը կներկայացվի համայնքապետարանի համաձայնեցմանը:

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ<sup>2</sup> ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 6602.7 \times 0,4 \times 25 = 66,027 \text{լ/ջուր կամ } 66.027 \text{մ}^3/\text{տարի ջուր (տարվա կտրվածքով):$$

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է կաթիլային եղանակով՝ երկաստիճան մաքրված ջրի ռեզերվուարից:

Չարինջա 144+40 տեղանոց  
կրթահամալիրի բարեկարգման և  
կանաչապատման հատակագիծ Մ1:500

**Պայմանական նշաններ**

	Տարածքի կանաչապատում
	Տարածքի ասֆալտապատում
	Սայթերի բետոնե սալիկներ
	Բազալտե եզրաքարեր



Ծառերի և թփերի մակնիշներ

N	Մակնիշ	Էջրիչ	Թանաղ
1		Բարդի	25-հատ
2		Տուխ	33-հատ
3		Կոկոսյան եղևնի	24-հատ
4		Կեղի	22-հատ
5		Գլխավոր աղբյուր	5-հատ
6		Կոկոսյան	17-հատ
7		Ճորճիցի	25-հատ

Համաձայնեցված է

Հ/Հ	Անուն Ազգանուն	ամիս ամսաթիվ	ստորագրություն
1			
2			
3			

## **9. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)**

Ներկայացված հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

**9.1 Օդային ավազան** արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
  - շինհրապարակը ցանկապատելու է- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,
  - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,
  - շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
  - բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
  - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,
  - բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:
- Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

**9.2 Հողային ռեսուրսներ.** Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ

մակերեսների վրա,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է մանրախիճ կամ բետոնասալ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,

- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,

- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

**9.3 Ջրային ռեսուրսներ.** Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան,

- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր,

- տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

### **Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.**

շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից,

- շինարարական հոսքաջրերն ուղղվելու են բիոզուգարաններ,
- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաշխատանքների ավարտից հետո բիոզուգարանները ապամոնտաժվելու են և տեղափոխվելու են Կապալառու կազմակերպության կողմից:

**Շահագործման փուլում կրթահամալիրի ջրամատակարարման համակարգը միացվելու է համայնքային ջրատարին:** Իսկ ջրահեռացման համակարգը՝ մաքրման կայանին:

**9.4 Կենսաբազմազանություն.** Գործունեության իրականացումը շրջակա միջավայրի կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություն չի ունենալու, այնուամենայնիվ նախատեսվում են որոշակի միջացառումներ.

- գործունեության և հարակից տարածքում ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների, հատկապես Ճակնոտեղ բաժանապտուղ(*Beta lomatogona* Fisch.et C.A.Mey) և Տերեփուկ Թախտաջանի(*Centaurea raktajanii gabrielian* Tomjan) կրիտիկական վիճակում գտնվող տեսակների հայտնաբերման, դրանց պահպանման, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

- աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

**9.5 Թափոններ.** Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից,

- քանդման արդյունքում առաջացած թափոնները տեսակավորել, առանձնացնել, առանձին թափոնատեսակները՝ մետաղական մասեր, փայտի մանցորդներ, տանիքի ծածկ և այլն, հանձնել համապատասխան մասնագիտական կազմակերպություններին,

- առանձին պիտանելի թափոններն օգտագործվելու են շինարարության փուլում,

- շին հրապարակի տարածքում կիստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1,5x1մ<sup>3</sup> չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը/սոսինձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

**Շահագործման** փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 6 հատ 1,5x1մ<sup>3</sup> տարողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ: Կենցաղային աղբի տեղափոխումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով:

- տեղադրվող վահանակների շարքից դուրս գալու դեպքում այն չտեղակայել բաց տարածքներում՝ ուղիղ արևի ճառագայթների տակ,

- շարքից դուրս եկած վահանակները տեղակայել փակ տարածքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը կամ փոխանակելը:

## 9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ

հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

**9.7 Աղմուկ և թրթռում.** Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

**Շահագործման փուլում** կրթահամալիրում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,

- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

**9.8 Արտակարգ իրավիճակներ.** Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,



- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց պահել նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրել դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,

- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

**-Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- Կրթահամալիրի, ներառյալ ստորգետնյա հարկերը (թաքստոց) կահավորելիս առաջնորդվելու են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով,

- կրթահամալիրի ստորգետնյա հարկերը ծառայելու են երեխաների և աշխատողների համար որպես թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով,

- ստորգետնյա հատվածում՝ թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք,

- շահագործման փուլում համալիրն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաժխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,

- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակաժխային օդափոխության արտածման համակարգերով,

- ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով,
- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,
- աստիճանավանդակի, վերելակի դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնափակվող:

**9.9 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.** Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,
- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն

պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 յուքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կատարել հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:

### **Շահագործման փուլ.**

Շահագործման փուլում կրթահամալիրն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- հաշմանդամների պահանջներին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով ապահովում,

- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ կառուցում,

- տարածքի մուտքը կահավորվել տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Շինարարության և շահագործման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջներով և 2024 թվականի փետրվար 12-ի թիվ 50-Ն հրամանների պահանջներով:

**9.10 Սոցիալական հարցեր.** Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,

- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

Կրթահամալիրի կառուցումը նպաստելու է.

- երեխաների համար նոր չափանիշներով, սեյսմակայուն շինության ապահովվածությանը, պահանջների բավարարմանը:

**9.11 Լանդշաֆտ.** շինարարության փուլում լանդշաֆտի վրա հնարավոր ազդեցությունը

մեղմելու նպատակով նախատեսվում է.

-բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքերը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,

- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,

- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Նախատեսվող կրթահամալիրը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է:

### **9.12. Բարեկարգում և կանաչապատում.**

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում,

- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով,

- նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում:

## **10. Մոնիթորինգ**

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- տեխնիկական վերահսկողության իրականացում՝ նախագծային անհամապատասխանություններից խուսափելու նպատակով,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի, հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ նորմերի համապատասխանության պահպանման հսկողություն,

- համապատասխան պայմանագրերի հիման վրա, թափոնների տեղափոխման վերահսկում,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացման վերահսկում,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում, ապահովվելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

## **11.Բողոքների ընթացակարգ**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

**Փակման փուլ.** Ելնելով գործունեության բնույթից փակման փուլ չի նախատեսվում:

**12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան**

<p><b>1</b></p>	<p><b>Օդային ավազան</b></p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,</li> <li>- շինհրապարակը ցանկապատվելու է,</li> <li>- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,</li> <li>- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,</li> <li>- շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,</li> <li>- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,</li> <li>- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,</li> </ul>	<p><b>Կապալառու</b></p>	<p><b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b></p>
-----------------	-----------------------------	--	-------------------------	--

		<p>- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p>		
2	<b>Հողային ռեսուրսներ</b>	<p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,</p> <p>- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,</p> <p>- շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,</p> <p>- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,</p> <p>- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,</p>	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b>

		<ul style="list-style-type: none"> <li>- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,</li> <li>- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով,</li> <li>- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում.</li> <li>- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:</li> </ul>		
3	<b>Ջրային ռեսուրսներ</b>	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> <li>- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով</li> </ul>	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b>



		<p>մակերևութային հոսքեր,</p> <ul style="list-style-type: none"> <li>- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բոզուգարան,</li> <li>- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր,</li> <li>- տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը,</li> <li>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,</li> <li>-բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտաձածկը չվնասելու համար:</li> </ul> <p><b>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից,</li> <li>- շինարարական հոսքաջրերի համար կկառուցվի ժամանակավոր սեպտիկ հոր,</li> <li>- բիոզուգարանի, սեպտիկ հորի</li> </ul>		
--	--	---	--	--

		<p>մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- շինաշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և տեղափոխվելու է Կապալառու կազմակերպության կողմից:</p> <p><b>Շահագործման փուլում</b> կրթահամալիրի ջրամատակարարման համակարգը միացվելու է քաղաքային ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգը՝ Մաքրման կայանին:</p>		
4	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից,</p> <p>- շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,</p> <p>- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,</p>	Կապալառու	«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏՀՀ

		<p>- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,</p> <p>- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,</p> <p>- բացառել աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,</p> <p>- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:</p> <p><b>Շահագործման</b> փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 6 հատ 1,5x1մ<sup>3</sup> տարողության</p>		
--	--	--	--	--

		պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:		
5	<b>Պատմամշակութային և բնության հուշարձաններ.</b>	Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶԿ</b>
6	<b>Կենսաբազմազանություն</b>	Գործունեության իրականացումը շրջակա միջավայրի կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություն չի ունենալու, այնուամենայնիվ նախատեսվում են որոշակի միջացառումներ. - գործունեության և հարակից տարածքում ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶԿ</b>

		<p>սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,</p> <p>- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների, հատկապես Ճակնդեղ բաժանապտուղ(Beta lomatogona Fisch.et C.A.Mey) և Տերեփուկ Թախտաջանի(Centaurea raktajanii gabrielian Tomjan) կրիտիկական վիճակում գտնվող տեսակների հայտնաբերման, դրանց պահպանման, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,</p> <p>- աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:</p>		
7	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <p>-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,</p> <p>- կառուցապատման տարածքում</p>	Կապալառու	«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ

		<p>ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,</li> <li>- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,</li> <li>- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,</li> <li>- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,</li> <li>- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,</li> <li>- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը: Շահագործման փուլում նախատեսվում է.</li> <li>- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,</li> <li>- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ համապատասխան մարմինների եզրակացությունների հիման վրա:</li> </ul>		
--	--	---	--	--

8	Արտակարգ իրավիճակներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,</li> <li>- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն,</li> <li>- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,</li> <li>- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,</li> <li>- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային</li> </ul>	Կապալառու	«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏՀՀ
---	----------------------	--	-----------	-------------------------

	<p>միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից,</p> <ul style="list-style-type: none"> <li>- հակահրդեհային</li> </ul> <p>միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,</p> <ul style="list-style-type: none"> <li>- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,</li> <li>- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,</li> <li>- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,</li> <li>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:</li> </ul> <p><b>Շահագործման փուլ.</b> Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.</p>		
--	---	--	--



		<ul style="list-style-type: none"> <li>- բնակելի համալիրի ստորգետնյա հարկերը ծառայելու են բնակչության համար թաքստոց արտակարգ իրավիճակներում՝ բնակչության պաշտպանական նպատակներով,</li> <li>- ստորգետնյա հատվածում՝ թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք,</li> <li>- շահագործման փուլում բազմաբնակարան բնակելի համալիրն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,</li> <li>- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,</li> <li>- աստիճանավանդակի, վերելակի դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնափակվող:</li> </ul>		
9	<b>Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն</b>	<p>Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության</li> </ul>	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏՀՀ</b>

		<p>նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,</p> <ul style="list-style-type: none"> <li>- ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,</li> <li>- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,</li> <li>- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,</li> <li>- աշխատողների համար ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,</li> <li>- ապահովվել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան,</li> </ul>		
--	--	--	--	--

		<p>ջեռուցիչ և այլն),</p> <ul style="list-style-type: none"> <li>- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,</li> <li>- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,</li> <li>- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,</li> <li>- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</li> <li>- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնարձիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի</li> </ul>		
--	--	--	--	--

	<p>5կմ/ժ,</p> <ul style="list-style-type: none"> <li>- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,</li> <li>- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,</li> <li>- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կատարել հոսանքատար մասերի մեկուսացում,</li> <li>- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,</li> <li>- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:</li> </ul> <p><b>Շահագործման փուլ.</b></p> <p>Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006</p>		
--	--	--	--

		<p>շինարարական նորմերին համապատասխան:          Մասնավորապես նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջներին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,</li> <li>- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,</li> <li>- տարածքի մուտքը կահավորվել տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:</li> </ul>		
10	<p><b>Էներգաարդյունավետություն և էներգախնայողություն</b></p>	<p>Կրթահամալիրը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝</p> <p>Էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատում:</p> <p>Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված</p>	Կապալառու	«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏՀՀ

		<p>պահանջներին համապատասխան:</p> <p>Շահագործման փուլում բնակելի համալիրը կառուցվելու է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• շենքի արտաքին պատերը պատվելու են նորմավորված, հրակայուն և անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ նյութերով,</li> <li>• կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,</li> <li>• շենքերի միջտարածքային և բնակիչների կողմից օգտագործվող ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,</li> <li>• լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:</li> </ul> <p>Բնակելի համալիրն ապահովված է լինելու.</p> <ul style="list-style-type: none"> <li>- արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,</li> <li>- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, վթարային ելքի</li> </ul>		
--	--	---	--	--

		ցուցանիշներով, օդափոխության, հակաճխային օդափոխության արտաձման համակարգերով, - ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով:		
11	<b>Սոցիալական</b>	Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է. -շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը, - բացառել շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները, - գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:  Շահագործման փուլում կրթահամալիրի կառուցումը նպաստելու է. - երեխաների համար նոր չափանիշներով, սեյսմակայուն շինության ապահովվածությանը, պահանջների բավարարմանը:	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏՀՀ</b>
12	<b>Լանդշաֆտ</b>	-Բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները: -Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում. - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏՀՀ</b>

		<ul style="list-style-type: none"> <li>- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,</li> <li>- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:</li> </ul>		
13	<b>Բարեկարգում և կանաչապատում</b>	<p>Նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում,</li> <li>- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով,</li> <li>- նորատունկ բուսականության, ծառերի չկաշելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում:</li> </ul> <p>Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պոլիպրոպիլենե խողովակներով՝ կաթիլային եղանակով:</p>	<b>Կապալառու</b>	<b>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b>

**13.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ**

հհ	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի Վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջոց	Մոնիթորինգ Կատարող/Վերահսկող
----	---------------	-------------------------	-------------------	-----------------	---------------	------------------------------



1	Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված	<p>- Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում:</p> <p>- Ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում,</p> <p>- կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգարանի, սեպտիկ հորի տեղադրում:</p>	<p>Գործունեության ենթակա տարածքում</p> <p>Գործունեության տարածքում</p>	<p>Ստուգայցեր, գործիքային ստուգումներ</p> <p>Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր</p>	<p>Շինարարության փուլում՝ ամենօրյա:</p> <p>Փոշենստեցումը տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ</p> <p>Պարբերաբար՝ ոչ ուշ 3 ամիսը մեկ հաճախականությամբ</p>	<p><b>Կապալառու «Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶԸ</b></p>
2.	Կենսաբազմազանություն	Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների, հատկապես ճակնդեղ բաժանապտուղ (Beta lomatogona Fisch.et	Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ	Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր	Շինարարության սկզբում	<p><b>ՀՏԶԸ</b></p> <p>Համապատասխան գերատեսչության</p>

		C.A.Mey) և Տերեփուկ Թախտաջանի(Centaur ea raktajanii gabrielian Tomjan) կրիտիկական վիճակում գտնվող տեսակների հայտնաբերման, դրանց պահպանման, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման միջոցառումների իրականացում:		համապատասխան պատասխանատու գերատեսչություններին		մասնագետ
3	<b>Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն</b>	-Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,  -շինարարության կանոնների անձնական պաշտպանության	Գործունեության իրականացման ենթակա տարածքում	Իրազեկումներ և ստուգումներ  Ստուգայցեր	Պարբերաբար  ամենօրյա ռեժիմով,	<b>Կապալառու «Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b>  <b>Համապատաս</b>

	<p><b>Շինարարական նորմերի պահպանում</b></p> <p><b>Աղմուկ, թրթռում</b></p>	<p>նորմերի խստիվ պահպանություն, -բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝</p> <p>-հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p> <p>Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝</p> <p>Աղմուկի և թրթռումների մակարդակի և</p>	<p>Շինհրապարակ</p> <p>Գործունեության</p>	<p>Ստուգայցեր</p> <p>Ստուգայցեր</p>	<p>Հաաճախակի</p> <p>Ոչ պակաս, քան</p>	<p>խան գերատեսչությունների տեսչական մարմիններ</p> <p>Տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմին</p> <p>«Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</p>
--	---	---	--	-------------------------------------	---------------------------------------	---

		բարձրացմանն ուղղված միջոցառումներ:	իրականացման ենթակա տարածքում		երեք ամիսը մեկ անգամ	
4	<b>Նյութեր</b>	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից:	Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ	Մատակարարման ընթացքում	Շինարարության փուլում՝ պայմանագրերի առկայություն	<b>Կապալառու «Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b>
5	<b>Թափոն</b>	Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Գործունեության ենթակա տարածքից	համապատասխան պայմանագրերի հիման վրա տեղափոխում	Շինարարության ընթացքում	<b>Կապալառու «Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b>
6	<b>Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ</b>	- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:	Շինհրապարակ շինհրապարակից դուրս՝	Սստուգայցեր  Դիտողական ստուգումներ,	Շինարարարական և աշխատանքների կատարման ընթացքում  Պարբերաբար  Շինարարարական և աշխատանքների կատարման	<b>Կապալառու «Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ</b>

					ընթացքում	
7	<b>Կանաչապատում և բարեկարգում</b>	Վերականգնել և բարեկարգել շրջակա տարածքը, - տարածքի կանաչապատման աշխատանքների և կանաչապատման ծրագրի համապատասխանության ուսումնասիրություն, - կանաչ զանգվածի վիճակի՝ կաշողականության ուսումնասիրություն և ծառերի աճն ապահովվելու նպատակով մշտադիտարկում:	Գործունեության տարածք	Դիտողական ուսումնասիրություն	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	<b>Կապալառու</b>  «Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ  Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ
8	<b>Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բողոքների արձագանքում</b>	Բողոքների, դիմումների առկայություն	Գործունեության վայր	Դիմումների, արձագանքում	Շինարարության ընթացքում	<b>Կապալառու</b>  «Շինվեկտոր» ՍՊԸ ՀՏԶՀ

## 14. Հանրային քննարկումներ

Համաձայն ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ կատարվել է հանրային ծանուցում և քննարկումներ՝ Թալին համայնքի Զարինջա վարչական շրջանի վարչական ղեկավարի նստավայրում: Քննարկմանը մասնակցել են գործունեություն իրականացնող ընկերության, համայնքի ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ: Հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցադրումները և առաջարկությունները ներառվել են հաշվետվությունում: Գործունեության վերաբերյալ առկա է Թալինի համայնքապետարանի ավագանու որոշումը, որով նախնական համաձայնություն է տվել գործունեության իրականացմանը: Հավելվածներ 4,5:

Հանրային քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը, որն էլ հիմնավորում է նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանությունը Թալին համայնքի հեռանկարային զարգացման հիմնադրույթային փաստաթղթերին, հեռանկարային զարգացմանը:

## 15. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

1.«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

2.«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1999թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

3.«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ

հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

4.«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

5.«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

6.«ՀՀ Հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպարավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

7.«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

8.«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված

հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

9.«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

10.«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

11. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

12. «Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

13.Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

14. ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:



15. ՀՀ կառավարության 29. Հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
16. ՀՀ կառավարության 29. հունվարի.2010թ. ` «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
17. ՀՀ կառավարության 31.07.2014թ.` ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
18. ՀՀ կառավարության 08.02.2018թ. «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 108- Ն որոշում:
18. ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1396-Ն որոշում:
19. ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
20. ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:
21. ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ «ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՆՈՐՈԳՎՈՂ) ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N426-Ն որոշում:

## Գրականություն

1. СП.485.13130.2021:

2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամաններ:

«ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ;

4. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04\_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:

5. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:

6. ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ:

7. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին ՇՆԵՎԿ III-IV.2008:

8. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամաններ:


9. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ -2024 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:

10. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն Քաղաքաշինության նախարարի հրաման (8 ապրիլի 2014):

11. ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:

12. ՇՆուԿ 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում),
13. Թալին համայնքի 2023-2027թթ. 5-ամյա զարգացման ծրագիր:
14. ՀՀ վիճակագրության կոմիտե (https://armstat.am

# Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ <b>ՎԿԱՅԱԿԱՆ</b> ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ</p>	 <p>Կադաստրի կոմիտե</p>
<p>Սույն վկայականով հաստատվում է 20 հոկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.</p>		
<p><b>1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)</b> «ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՆՋԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ</p>		
<p><b>2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b> Մարզ Արագածոտն, համայնք Զարինջա 2-րդ փողոց 3 դպրոց</p>		
<p><b>3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ</b> Անհատույց օգտագործման պայմանագիր՝12.10.2021թ. թիվ 13844</p>		
<p><b>4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ</b> Կադաստրային ծածկագիրը՝ 02-044-0027-0011 Մակերեսի չափը (հա)՝ 1.564 Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ</p>		
<p><b>ՎԿԱՅԱԿԱՆ N 20102021-02-0016, գաղտնաբառ՝ ZHKPQPYHBIIU</b></p>		
<p><small>Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է արտգվել Կադաստրի կոմիտեի <a href="http://www.e-cadastre.am">www.e-cadastre.am</a> կայքէջի միջոցով</small></p>		
<p>Էջ 1/2</p>		

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նայատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ արանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	02-044-0027-0011-001	Դպրոց	2056.42 քմ	ԱՆՀԱՏՈՒՑՑ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄ
2	02-044-0027-0011-004	Կաթսայատուն	72 քմ	ԱՆՀԱՏՈՒՑՑ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄ
3	02-044-0027-0011-005	Կաթսայատուն	16.56 քմ	ԱՆՀԱՏՈՒՑՑ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄ
4	02-044-0027-0011-002	Անավարտ շինություն	636.9 քմ	ԱՆՀԱՏՈՒՑՑ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄ
5	02-044-0027-0011-003	Անավարտ շինություն	580.7 քմ	ԱՆՀԱՏՈՒՑՑ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄ
6	02-044-0027-0011-006	Ա/ի	7 քմ	ԱՆՀԱՏՈՒՑՑ ԾԳՏԱԳՈՐԾՈՒՄ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

636.9քմ և 580.7 քմ մակերեսներով անավարտ շինությունների ավարտվածության աստիճանը՝ անավարտ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՆԻ ԱՐԳԱՐՑԱՆ Չբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱՎԱՆ N 20102021-02-0016, գաղտնաբառ՝ ZHKQPYHBMU

Փաստաթղթի ինկոնքունը և վավերականությունը կառուցված է պորտալի կադաստրի կայքէջի վրա  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

էջ 2/2



Կադաստրի կոմիտե

## Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանք



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 55

17 մայիս 2024թ.

Օբյեկտ	<p><u>Նոր կրթահամալիրի կառուցում, 200 աշակերտի համար միջնակարգ դպրոց և 4 քրեիսայի համար մանկապարտեզ, Կրթահամալիրի կառուցում, . 4-րդ</u>  <small>(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերանվազանում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ բնորոշումը, եզրույթը և փակաչափային ասֆիճանը (կարծադրիան))</small></p> <p>Նախագծային փաստաթղթերի մշակման համար</p>
<small>(նախագծման փուլերը և սյն)</small>	
Գտնվելու վայրը	<p><u>Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Ջարինջա բնակավայր 2-րդ փողոց, 3 դպրոց, ծածկագիր՝ 02-044-0027-0011</u>  <small>(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիր)</small></p>
Կառուցապատող	<p><u>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՏՀՀ) , ք.Երևան 0037, Կ.Ուլենեցու 31 շ. 00846441</u>  <small>(կազմակերպության անվանումը, գրանվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)</small></p>
Առաջադրանքի տրամադրման հիմքը	<p><u>Կառուցապատողի 10.05.2024թ հայրը և անշարժ գույքի նկարմամբ թիվ 20102021-02-0016 իրավունքի պետական գրանցման վկայականը</u>  <small>(կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության տրանսպորտային սահմանված կարգով հողամասի գրամադրման, առաջաժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անդամաժող նպատակները)</small></p>
Առաջադրանքի գործողության ժամկետը	<p><b>24 ամիս</b></p> <p><small>(N ) հավելվածի 32-րդ կետին համապատասխան)</small></p>

### ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	<p><u>Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Ջարինջա բնակավայր 2-րդ փողոց 3 դպրոց հասցե, նպատակային նշանակություն բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման</u>  <small>(հողամասի դիրքը թաղաքաբաշխական միջավայրում, դրա նկատմամբ կից գործառնական նշանակությունը)</small></p>
2. (*) Հողամասի չափերը	<p><b>1,564 հա</b></p> <p><small>(հողամասի սահմանները՝ կողողինադային նշանարմամբ, մակերեսը (հա))</small></p>



3. Հողամասի անկա վիճակը

**Կառուցապարզված փարածը՝ դպրոց-2056.42 քմ, կաթսայագրուն-72 քմ, կաթսայագրուն-16.56 քմ, անավարդ շինություն-636.9 քմ, անավարդ շինություն-580.7 քմ և ս/հ քմ**

(նկենի ընդհանուր շենքեր (այդ թվում՝ քանդան ձեռնարկ) անկառնությունը (ազատություն, նշանակությունը, նախնականությունը, շինարարական կտրվելը և ու անպատասխան թարեությունը և այլն)

4. (\*) Տրամադրության պայմանները

**2-րդ փողոց**

(նամակների անկառնություն, նկատարարներ կանոնադրի մարմնում նշել)

5. Նեմենկության ցանցեր և օտարավորումներ

**Հողամասին կից անկա է էջ. հաղորդման և գազի գծեր**

(նամակները նշանակող կամ կից գազանցող անցողի ինժեներական նշանակությունները. այդ թվում՝ ստորանկյուն)

չքանակապատասխան, կրկն, քաղաքացիական, զսպ քրթ մարտարարուն, Հճնդրանկանություն, էնկրունային կարողություն և անկառնություն

6. (\*) Կից հողամասեր

**Մասնավոր և համայնքային սեփականություն**

(կից հողաբաղադրումների անկանում և դրանք անկանող համայնքային ներկայացված կանոնակ)

7. Թնուցյալ հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գույքիներ)

**Չկան**

8. (\*) Հատակագծային սահմանափակումներ

**Չկան**

(տարածքի անկանում, նախաքննակ և այլն)

(կողմնակալ ցուցող արտադրական, սաշտանային շենքերի, ինժեներաքանակության նշանակությունների և այլ օբյեկտների նշանակ սահմանափակումները. այդ թվում՝ ստորանկյունները)

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՇՏԱՆՆԵՐ**

(անտղանկիչով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով (Մ 1:500))

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

**Համաձայն էքզիզ ատաչարկի**

(նկնելով Հայաստանի Հանրապետության քրեկոդի և նորմատիվադրական փաստաթղթերի պահանջները, անկա նախաքննակ նշանակյալ փաստաթղթերի դրույթները կամ դրանք թաղանթադրական շենքերի կառուցման (կառուցման) շարաքանակական միջավայրի պահանջները, սուպերկոդներ մակարեղի մասնական, փակերների, ստապերի ցուցիչ պարունակները համահասնությունների և գտնային քոմունների գնառնություն)

9.1 (\*) օբյեկտի ինակրությունը կառվելու գծից (մետր)

**Ըստ պահանջվող նորմերի**

9.2 (\*) ինակրությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

**Ըստ պահանջվող նորմերի**

9.3 թույլատրելի թարձրությունը (մետր)

**Ըստ պահանջվող նորմերի**

9.4 կառուցապատման խտության գործակիցը (կատույցի (կատույցների) ընդհանուր մակերեսի ռարաբերությունը հողամասի մակերեսին)

35%

9.5 կառուցապատման տրկուրը (կառուցապատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին)

տոկոսներով (%)

9.6. Կանաչագետնան տոկոսը (կանաչագետն տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին)՝ տոկոսներով (%)

50%

9.7 այլ պահանջներ

**Կաթսայարան, մարզադաշտ և կեդրաշրջերի մաքրման կայան կամ սեպարիկ հոր**

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների ընտելման կամ տեղափոխման (սպանոնտաժման) պայմաններ և աշխատանքների հերթականությունը

**Աշխատանքային հերթականությունը ըստ ճարտարագեոմետրիկ մասի, քանդման ենթակա են դարձող երկու կաթսայարանները, երկու անավարտ շինությունները և ա/հ-ն**

11. Ատորգետնյա, կիսանկուղի և անաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

**Ըստ պահանջվող նորմերի**

12.(\*) Ինժեներական ցանցեր և տարբավորումներ

**Պահանջների՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկարագրամամ**

12.1.(\*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

**Համաձայն տեխնիկական պայմանների**

(իսկանայն մարզկառավարող մարմանցիտրուցյան տեխնիկական պայմաններով)

12.2.(\*) էլեկտրամատակարարում

**Համաձայն տեխնիկական պայմանների**

(իսկանայն մարզկառավարող կազմակերպության տեխնիկական պայմաններով)

12.3.(\*) գազամատակարարում

**Համաձայն տեխնիկական պայմանների**

(իսկանայն մարզկառավարող կազմակերպության տեխնիկական պայմաններով)

12.4.(\*) էլեկտրոնային հաղորդակցության մարդնատար կոյուղու (ներառյալ դիտակորը) տեղադիրքը

**Համաձայն տեխնիկական պայմանների**

(իսկանայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նյանկայն պրոյեկտով)

12.5. թույլ հուսանքներ

**Չկան**

12.6. աղբահանություն

**Համաձայն ԹՊՀԻԻ համայնաքաղաքարանի կողմից պրոյեկտ տեղեկանքի, 5կմ հեռավորության վրա գտնվող շին. աղբավայր**

13. Տարածքի ինժեներական նախագատրատում

**Ըստ պահանջվող նորմերի**

(ինժեներ կազմակերպման, ջրամատակարարման, էլեկտրական առաջարկատրական միջոցառումներով)

14. Բառեկարգում

**Տարածքի բարեկարգում, ցանկապարում**

(ընտելափայտի պլանտյուման վերականգնող առանձնընդ. կանաչապարում մարզարանայնական միջոց մեղ. ցանկապարում, ցրվածք և այլն)

15. Շինարարական նյութեր

**Տեղական շինարարական նյութեր**

(շինարարական նյութերի օգտագործման ստանդարտները կանվանով, ձևապատկերի յուսումներ, սպրաչին որևեղ. նպատակներով վերականգնող)

16. Պաշտպանական կարոյցներ

**Ըստ պահանջվող նորմերի**

(արդակայն իրաժմաններում մարտկանց և ցրելիներտ առաջարկատրական միջոցառումներով)

17. Հակահրդեհային պահանջներ

**Ըստ պահանջվող նորմերի**



(Ֆակսիլիտի անվանելուց առաջին միջատումը)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաբար խմբերի պաշտպանության միջոցառումներ

Չկա

19. Երգակա միջավայրի պահպանում

**Շար պահանջվող նորմերի**

(Երգակա միջավայր պահպանող սպեցիալիզացիայի միջատումը)

20. Երևաբարության կազմակերպում

**Շին հրապարակի կազմակերպման նախագիծ**

(տարաբարությունը շինարարության հետ կապված անդամաբաշխ պայմանագրի միջոցով ստեղծված ստեղծված վնասները)

21. Անաջարակների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

17/05/2024-ից մինչև 17/05/2026-ը.

(Ընդմեջ տարաբարակի գործողության ժամկետը և նախագիծ մշակման փուլերը)

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

22. Նախագծային վիստաբրոյեքտի

**Համաձայն ՀՀ կառավարության 19.05.2015թ-ի թիվ 596-Ն որոշման**

(Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված փորձաքննության փուլերը կամ նախագծի երաշխավորակիտը՝ որով կարգվելով համապատասխան իրավական ակտերը)

վորձաքննությանը ներկայացվող պահանջներ

23. Ընդանկյալ համաձայնեցում

**Համաձայն ՀՀ կառավարության 26.06. 2009թ-ի որոշման**

(Պատկառն և Կառավարության Հանրապետության օրենսդրության նախագիծային փուլերի շահագրգիռ մարմիններ հետ նախագծի կազմակերպման համաձայնեցումը, ինչպես նաև անաջարակների շտաբի կառավարությունը՝ N 1 հավելվածի 5/բ) բնակչությանը հրապարակելով)

24. Հապարակական քննարկումներ

**Համայնքի բնակիչներ, մանկավարժական խորհուրդ**

(Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված փուլերով և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական նպատակադրումների ստացում

**Օրենքով սահմանված կարգով**

(Ընդմեջ տվյալ օրենքի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները իրականացնելու ու բնաշխատանքային և այլ ժառանգյալ մարմինների հետ ընդմեջ մաս N 1 հավելվածի 5Բ-րդ նկարով սահմանված փուլերով՝ իրենց նախագիծային ստեղծված ստեղծված վնասները (նպատակադրում) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Չկա

27. Կլի պայմաններ

Չկա


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ Կ.Տ.



ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆ

### Հավելված 3. Տարածքի տեղադիրը

Չարինջա 200+40 տեղանոց կրթահամալիր:  
տարածքների սահմանակատերի կորդինատները՝ WGS-84 կորդինատատային համակարգով



1	8396536.1650	4482932.6073	0.0000
2	8396459.0289	4482993.0701	0.0000
3	8396481.8482	4483025.4376	0.0000
4	8396501.8494	4483054.2490	0.0000
5	8396508.8017	4483063.0573	0.0000
6	8396533.4018	4483095.3672	0.0000
7	8396544.6015	4483110.6563	0.0000
8	8396622.5931	4483069.9003	0.0000
9	8396608.5943	4483047.5363	0.0000
10	8396614.3021	4483044.2506	0.0000
11	8396605.5583	4483018.1510	0.0000
12	8396590.8130	4482999.8769	0.0000
13	8396585.4996	4482993.5502	0.0000
14	8396546.9579	4483000.3987	0.0000
15	8396527.4331	4483015.7686	0.0000
16	8396536.2660	4483026.9850	0.0000
17	8396537.9889	4483025.6288	0.0000
18	8396565.0557	4483060.0126	0.0000
19	8396556.3578	4483066.8624	0.0000
20	8396567.9036	4483081.5233	0.0000
21	8396597.8621	4483057.9401	0.0000
22	8396586.3135	4483043.2697	0.0000
23	8396581.6052	4483046.9794	0.0000
24	8396568.0836	4483029.8097	0.0000
25	8396569.3380	4483028.8218	0.0000
26	8396565.5717	4483024.0394	0.0000
27	8396564.3173	4483025.0273	0.0000
28	8396554.5330	4483012.5980	0.0000
29	8396555.7850	4483011.6120	0.0000

## Հավելված 4. Թալինի համայնքապետարանի ավագանու որոշումը



ՀՀԹԻԶ/ԿԵԿԿԿ 471

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի  
Թալինի համայնքապետարան, Գայի -1, Հեռ. 060-75-77-87  
Էլ. փոստ [talinihamaynqapetaran@list.ru](mailto:talinihamaynqapetaran@list.ru)

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<31>> մայիսի 2024 թվական N 71-Ա

**ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԻՆԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՑՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՇԻՆՎԵԿՏՈՐ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2024 թվականի մայիսի 29-ին Թալին համայնքի Զարինջա բնակավայրում փողոց 2 շենք 3 հասցեում կրթահամալիրի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ անցկացված հանրային քննարկման արձանագրությունը.

#### Թալին համայնքի ավագանին որոշում է՝

- 1.Տալ նախնական համաձայնություն «Շինվեկտոր» ՍՊ ընկերությանը Թալին համայնքի Զարինջա բնակավայրում փողոց 2 շենք 3 հասցեում (գործող միջնակարգ դպրոցի տարածքում) կրթահամալիրի կառուցապատման համար:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 14

Դեմ- 0

Ձեռնպահ- 0

- 1.Բաբկեն Պողոսյան
- 2.Արման Կարապետյան
- 3.Սարգիս Գրիգորյան
- 4.Սևակ Սիմոնյան
5. Գեղամ Ղազարյան
6. Սերգե Մկրտչյան
- 7.Հարություն Կարապետյան
- 8.Էմին Մկրտչյան
- 9.Արմեն Ծառուկյան
- 10.Նելլի Մարգարյան
- 11.Գեղամ Մարգարյան

- 12. Արուսիկ Վարդանյան
- 13. Նարեկ Գրիգորյան
- 14. Մնացական Մնացականյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Տ. ՄԱՓԵՅԱՆ

ք. Թալին  
31 մայիսի 2024թ.

## Հավելված 5. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ, հայտարարություն

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Թալին համայնքի Ջարինջա բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում**

2024թ. մայիսի 29-ին՝ ժամը 11:00-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի տեղի ունեցավ Թալին համայնքի Ջարինջա բնակավայրի կրթահամալիրի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումը (1-ին փուլ):

Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի ապրիլի 25-ին տեղադրվել է TV ալիք թերթում և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կայքում (atdf.am):

**Ծրագրի անվանում՝** Մինչև 2026թ. կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ

**Ծրագրի իրականացնող կազմակերպություն՝** Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏՀՀ),

**Նախագծային կազմակերպություն՝** «Շինվեկտոր» ՍՊԸ

### ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Խ. Տերտերյան	Թալինի համայնքապետարանի համակարգող
Ս. Մանուկյան	Ջարինջա բնակավայրի վարչական ղեկավար
Ռ. Վարդանյան	ՀՏՀՀ, բնապահպան
Ռ. Սարգսյան	«Շինվեկտոր» ՍՊԸ, տնօրեն
Ա.Խաչատրյան	«Շինվեկտոր» ՍՊԸ, ճարտարապետ



Բացման խոսքով հանդես եկավ Թալին համայնքի Ջարինջա բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Մանուկյանը: Խոսքը փոխանցեց նախագծային կազմակերպության ներկայացուցիչ Ա. Խաչատրյանին:

«Շինվեկտոր» ՍՊԸ-ի ճարտարապետ Արմենակ Խաչատրյանը ներկայացրեց, որ Թալին համայնքի Ջարինջա բնակավայրի կրթահամալիրի կառուցումն իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակում Ասիական Ջարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ: Թալին համայնքի Ջարինջա բնակավայրի կրթահամալիրը նախատեսվում է կառուցել Թալին համայնքի Ջարինջա բնակավայրի 2-րդ փողոց, 3 հասցեում գտնվող ներկայիս գործող դպրոցի տարածքում, իսկ գործող համանուն դպրոցը նախատեսվում է շինարարական աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժել: Թալին համայնքի Ջարինջա բնակավայրի կրթահամալիրը նախատեսվում է 200 աշակերտի և մանկապարտեզ 40 երեխայի համար: Դպրոցի հատակագծային լուծումներում հաշվի են առնված սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճ, նոր կաթսայատուն, բացօթյա մարզահրապարակ: Մուտքերի տեղադիրքերի ընտրությունն իրականացված է նաև այնպես, որ դպրոցի համալիրն ամեն ուղղությամբ ունենա առնվազն 2 էվակուացիոն ելքեր: Նախագծվող դպրոցի հիմնական մուտքը նախատեսվում է 2-րդ փողոցի կողմից:

#### **Մասնակիցները բարձրաձայնեցին իրենց հարցերը**

1. Հարց հնչեց կատարվող աշխատանքների ժամկետի և տեղի աշխատուժի ներգրավելու վերաբերյալ , «Շինվեկտոր» ՍՊԸ -ի տնօրենը նշեց, որ իրենք կողմ են համայնքի շինարարական մասնագետներին ներգրավվել կրթահամալիրի կառուցման աշխատանքներին:
2. Հարց բարձրացվեց կրթահամալիրի դահլիճի և սպորտհրապարակի առկայության մասին: «Շինվեկտոր» ՍՊԸ-ի ճարտարապետը տվեց նախագծին համապատասխան պարզաբանումներ:
3. **Վարչական ղեկավար Ս. Մանուկյանը և «Շինվեկտոր» ՍՊԸ-ի ճարտարապետ Ա. Խաչատրյանը** պարզաբանումներ արեցին կադաստրային քարտեզի և փաստացի տեղանքի վերաբերյալ :

Պատասխանատու՝ Թալինի  
համայնքապետարանի  
համակարգող

Խ. Տերտերյան

Վարող՝ Ջարինջա  
բնակավայրի վարչական  
ղեկավար

Ս. Մանուկյան

Արձանագրող՝ Թալինի  
համայնքապետարանի առաջին  
կարգի մասնագետ

Լ. Պարոնյան

Ձեռնարկող՝ «Շինվեկտոր»  
ՍՊԸ

Ռ. Սարգսյան

*Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝  
համապատասխան սփորազրույթուններով*

Քաղկեդոնի համայնքի Զարինգա բնակավայր

Հանրային 1-ին քննարկում

29.05.2024

Մասնակիցների ցանկ

N	Ազգանուն/անուն	Ջրադիվանություն	Ստորագր.
1	Վեդյան Կրստնայիր	Բնակիչ	
2	Վեդյան Վահե	Կենտրոն	
3	Ջիանի Դարմաշան	Կանաչաբույսերի արտադրող	
4	Չուպրյան Վրայր	Բնակիչ	
5	Քոչարյան Վահրամյան	Բնակիչ	
6	Զաչ Կոչան	Բնակիչ	
7	Չիբուկյան Գրիգորյան	Բնակիչ	



N	Ազգանուն/անուն	Զբաղվածություն	Ստորագր.
8	Արմեն Կարաբյան	բնակիչ	Արմեն
9	Գրիգոր Դարձյան	բնակիչ	Գրիգոր
10	Նիկոլայ Կարաբյան	բնակիչ	Նիկոլայ
11	Մանուկ Եղիազարյան	բնակիչ	Մանուկ
12	Դարձյան Իզար	բնակիչ	Իզար
13	Դարձյան Կար	բնակիչ	Կար
14	Մարգարյան Գրիգոր	բնակիչ	Մարգարյան
15	Սիմոնյան Սարգիս	բնակիչ	Սիմոնյան
16	Մարգարյան Մարգարյան	Բնակիչ	Մարգարյան
17	Արմեն Կարաբյան	Բնակիչ	Արմեն
18		-	
N	Ազգանուն/անուն	Զբաղվածություն	Ստորագր.

19	Մարգարյան Գրիգորյան	բնակիչ	Մարգարյան
20	Ռեհան Գրիգորյան	բնակիչ	Ռեհան
21	Քարեն Գրիգորյան	Կ.Մ.Գ.Ղ. Բնակիչ	Քարեն
22	Սարգսյան Երանյան	Կարգ. շինարար	Սարգսյան
23			
24			
25			
26			
27			
28			
29			
31			
32			

# ԵՄԱԿԻԻԲ

Լեւան կյանքում դրական փոփոխություններին:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (21.06.2014թ. 30-110-Ն) և 33 կառավարության 19.11.2015 թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ 2024թ. մայիսի 29-ին 33 Արագածոտնի մարզի Թալին համայնքի Չարինջա բնակավայրի վարչական շենքում ժամը 11:00-ին տեղի կունենա «Շինվեկտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Թալին համայնքի Չարինջա բնակավայրում կրթահամալիրի կառուցապատման վերաբերյալ («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի 8-րդ ենթակետ) առաջին հանրային լուսմտերը: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ զանգահարելով (+374) 95111468:

Ծահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող են ներկայացվել բանավոր՝ հանրային քննարկման ընթացքում կամ գրավոր՝ ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում: Համայնքի ղեկավարի կողմից հանրային լսման համար լիազորված անձ՝ հաշատուր Տերտերյան (talinihamayqapetaran@list.ru, հեռախոս +374 77002757):

Թալինի համայնքապետարան

## Տխու



Այս շաբաթ կինեց հանգիստ և խաղաղ վիճակում: Ամենայն հավանականությամբ, ցանկանում եք հեռանալ թոհուրոհից և մեկուսանալ ինչ-որ հանգիստ վայրում: Եթե բավականացի ազատ ժամանակ ունեք, ապա կարող եք գնալ ձկնորսության կամ անտառային գրոսանքի: Դա հոգեկան ներդաշնակություն կպարգևի: Աճում է ձեր հետաքրքրությունը ամեն անործվածայինի նկատմամբ:

## Չկոն



Այս շաբաթ հնարավոր է նյութական վիճակի բարելավում, սակայն չտրվեք մեծ ծայտեր կատարելու գայթակությանը: Շաբաթվա երկրորդ կեսին հնարավոր են հետաքրքիր հանդիպումներ և նոր ծանոթություններ, որոնք հետագայում կարող են մեծ դեր խաղալ ձեր գործնական կամ անձնական կյանքում: Հնարավոր է՝ այս շաբաթ նվեր ստանաք այն, ինչի մասին վաղուց երազել եք:

Նվազեցրե՛ք ռիսկերը՝ իրեն համար հարմար ել, սակայն չափա-

## Հավելված 6. Պետական տուրքի անդորրագիրը

**Ամերիաբանկ ՓԲԸ**  
 Վազգեն Սարգսյան 2  
 Զեռախոս (+374 10) 56 1111  
 Ֆաքս՝  
 Էլ փոստ՝ info@ameriabank.am

Տպված է՝ 08/08/2024 10:03 (UTC+04:00)

### Բյուջետային փոխանցում N 000039

Ամսաթիվ	08/08/2024	Նույնացուցիչ	f0fae184-41b0-472a-8c90-360ca932516a
Հաշիվ	1570032614660100	Գումար	
Շահառուի հաշիվ	900005000196	AMD	300,000.00
Վճարողի անվանում	«ՇԻՆՎԵԿՏՈՐ» ՍՊԸ		
Վճարողի բանկ	Ամերիաբանկ		
ՀՎՀՀ	00178968		
Տարածաշրջանի/ՂՏ կոդ	23		
Շահառուի անվանում	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն		
Ինքնազբաղ անձ	Ոչ		
Գումարը բառերով	Երեք հարյուր հազար դրամ		
Շտապ փոխանցում	Ոչ		
Նպատակ	ՀՀ Արագածոտնի մարզի Չարինջա բնակավայրի կրթահամալիրի կառուցում տեղակալման նախագծի շրջ. միջ-ի վրա ազդեցության փորձաքննության համար Բ կատեգորիա		
Ստորագրող	Ռաֆայել Սարգսյան		
Ստորագրության կարգ	I, II		
Ամսաթիվ	08/08/2024 10:01:28.107		
Սարքի անվանում	Digipass GO ընտանիքի սարք		
Սարքի սերիալ N	3766771597		
Ստորագրություն	767651		

Կատարված է